

6339

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Յ Ռ Վ Հ Ա Ռ Ա Կ Ա

Կ Ո Վ Ո Ւ Ա Ծ

Ծ Ո Ւ Ք Ր Ի Ւ



Վ Ա Ռ Ա Ա

ՏՊԱՐՈՒՆ ԱՐԵԼԵԼԵԱՆ, ՕՆՆԻԿ ԲԱՐՅԵՂԵԱՆԻ

1899

266

279

Եթե ուղարկած չէ  
Հայոց հանձնաւ

266  
Ա-79

15 NOV 2011

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՅՈՒՂ ՃԱՆԱԿԱ

ԽՈՉՈՅՑ

ՅՈՒՐԳԻՒ



ՎԱՐԴԱ

ՏԵՂՄԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՕՆՆԻ ԲՈՐՍԵԼԵԱՆԻ

1899

ԱՐԵՎԵՑՈՂԱՍ

Այս փոքրիկ ժետակովս մի ոչ թէ միայն  
վերին աստիճանի հետարրական . այլ եւ զար-  
մանալի եւ մինչեւ իսկ հրաշալի իրողութիւն-  
է, որ կը ներկայացնեմ հայ ընթերցողին :  
Ծովին Յովհաննես է դարձեր . կրօնամոլ մահ-  
մետական կրօնառորդ մողան, հաւատացեալ  
քրիստոնեայ է դարձեր եւ կը բարոգէ զՅիոնս :

Այս գրուածքը եւ շարադրութիւնը Յովհան-  
նէս Աւետարանէանի իր սեփական գրուածքն է,  
որ իր մերժութեան յետոյ ստորագրելոյն խթադ-  
րանօվն հայերէն լեզուաւ գրչի առաւ։ Չուզե-  
ցինք ոչ շարադրութեանը, ոչ ոճին, ոչ մերա-  
կանութեանը եւ ոչ ալ կետադրեամբ ձեռք  
դպցնել, որպէս զի ընթերցողը ինքը անմիջա-  
պէս մի սպաւորդին ասանայ։ Միայն մի խ-  
նի շատ ժիշտ տեղեր մի կետ առելցուցինք կամ  
պակասցուցինք, որ այս տեսակ մի գրուածք  
կարդալու հիմու յեղող մի անձ ըն շփորի։ Ոչ  
ընդ միշտ բայց երբեմն փոխանակ տան գրելու-  
սաղան կը գրէր. այդ շահեցինք։ Իր յառաջա-  
բանութիւնը Յովհ. Աւետարանէանը գրեր է գրոց



S8108-67

լեզուաւ, որովհետեւ մահմէտական հեղինակները սովոր են իրենց յառաջարանորին նոյն իրքին ոնդ գրելու, ինչն աղ անոնց հետեւեր է : Կետադրութիւնը բերի է անոր համար որ մահմէտական զրականութեանը աղ բանը բոլորովին անծանօր է :

Այս ժերակը հրատարակելով մի բանի նըպատակ ունինել .

Ա. որ ամեն կարդացող զարմանայ Աստծոյ շնորհացը վրայ, որ այսօր աղ հրաշք կը գործէ, եւ փառառե Անր սխանչելի անունը .

Բ. որ ամեն կարդացող համոզի, որ Քրիստոսի Աւետարանը այսօր աղ Աստծոյ զօրութիւն է հաւատացնը վրկելու .

Գ. որ մեր ձանացած ժամատիկոս Մահմէտականն աղ Աւետարանը կարդալով կարող է Քրիստոսի հաւատայ .

Դ. որ Յովաննես Աւետարանեանի օրինակով բացակերտած Քրիստոսի Աւետարանը տարածենի գրելով եւ խօսելով բարոգելով մեզ շրջապատող մահմէտականներուն է :

## ՅԱՌԱՋԱԲՈՆ

Ի պահանջելն Արժանապատիւ Պատուելի Սբ-րահամու Սմբատեանի կամ եղեւ ինձ գրելն ի վերայ այն, թէ որպէս ենա Սմբատան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ինձ նուասոյս, եւ որպէս դիպան դիպուածքն յիս ցմրկրտելն իմ, ի ձեռն նախախնամութեան :

Սհաւասփկ երկինք եւ երկիր յայս առնեն զփառս Արտչին ըստ բանի Դատի, Սաղմուերգուի . եւ արեգակն, լուսին, անհամար աստեղն, եւ մեծամեծ մոլորակ, ի ըշանս իրենաց զկան նորա կատարեն . առ ի ցուցանել զողորմութիւն Եհովայի, որ եցոյց ի ձեռն որդոյ իւրոյ միածնույ, առ մարդկային ազգն . եւ ես որպէս կարեմ ի զիր առնուլ զիր անհում սէրն զոր եցոյց ինձ յորժամ անարգելի զինեն յանգէս . եւ կամ ին լեզուաւ մարելս արտաճնել բանս ընորհաց հոգտոյն . որ խօսեցաւ ցնողի իմ, վասն ածելոյ ի լոյս կենարաւ, զանձն իմ կարուսեալ . Այլ պարտաւորեալ է իմ ասել, Տէ՛ր սխանչելեաց զիրաւալից բոց, միայն այն լեզու կարէ պամել որ սրբեալ եւ նորոգեալ է հոգով բով . եւ զգորութենէ բոսմէ . այն բերան մարք արտա-

սանելոր բանայ հրամանաւ հով եւ եք. նաև միան այնմ մտաց արժան արժէքն նամաչել արեանն Յիսուսի Քրիստոսի զոր ենեղ ի Գոդգորայ սակա մեղացն մարդոց, որ հոգին սուրբ եղեալ է ի նմա զձիր գնահատութեանց. աղդ աշխարհիս այսմիկ Են բառ արդեօֆ, որովք կարէ եղծանելի եւ մահացու մարդն նկարագրել եւ յօդել զնանաց Յիսուսի զորս զործեալ է ի յափենից եւ զործէ իսկ այժմ. մինչդեռ Յովհաննիս առաքեալն ասէ, « և աշխարհս իսկ ոչ կարէր տանել »: Ուրիմն ուր մնայ որ սկարս մարդանամ նառել. զողորմութենէ փրկչին զոր ցոյց ինձ, ճշգրտապէս. մինչդեռ ոչ զիտեմ բառս ըստ յայտնել զնակացողութիւն, եւ ըզգայունն մտաց իմոց: Ապա ուրիմն ըստ կարողութեան իմ ջանացից գրել զպամութիւն իմ ի լեզու աշխարհիկ եւ երէ բան ինչ ոչ կարեմ ճշգրտէս իմից ածել այժմ, քերես մտարեցից վերշապէս. զի յայտ է զիտեոց թէ միտք եւ յիշողութիւն սանձարձագ եւ ազատ են. վասն այսորիկ ոչ է մարք ամենայն ժամ սկահանչել ի յիշողութենէ զմեզ մատուցանել զնոյն բան ի նմին ժամու եւ ես լիապէս ճշգրտէ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՐԵՏԱՐԱՆԵԱՆ  
๖.

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԿՈՉՈՒԱԾ ՇՈՒՔԲՐԻ

Ես Յովհաննես կոչուած Շուքրիս որ ազգաւ օմանցի թիւք ծննած եմ եւ կրօնեալ ալ մահամետական մեծաց էի, պիտի զրեմ հետեւեալ պատմութիւնը. ուղիւով բազուն չմնայ այս մեծ եւ հրաշալի ժմանելը որ Խօսուած ցոյց տուա ինձ. համազերավ ինձ իւր աւետարանովը, կամ չնեց եւ բերաւ սուրբ հոգոյն ժմանեցը. իւր ուղարկն բաշից արեանը սիրոյն համար. որուն փառ յափենան յափենից:

Թուրքիոյ կարին (Արգրում) քաղաքին մէջ Ամր օվկի Միւլէյման, անուն մարդ մը կար որ Աստ վաշայի սպասաւորներէն մին էր, այսինքն, էր կնքապահ. ասիկա ունէր երկու դուստր, մեծին կնատիճէ իսկ վարչին Միւնիֆէ և Միւնի-անուն խատիճէ իսկ վարչին Միւնիֆէ և Միւնի-ֆէն իւր մանկութեան ժամանակներ զիստածով վարչին մը լսացեր էր, որով նաև լեզուն ալ չէր խօսեր, մը խլացեր էր, որով նաև լեզուն ալ աշքեւը տկարացեր վերջը ուրիշ արկածով մըն ալ աշքեւը տկարացեր էին. բայց խատիճէ ողջ և առողջ էր, որոյ հայրը էին. բայց խատիճէ ողջ և առողջ էր, որոյ հայրը զինքը ամուսնացուց քաղաքի ատենադպիրի հետ իրեւ երկրորդ կին. և այս գպիրն էր Պայպուրտցի էմին որ հրչակուած է տաճկաց մէջ իւր յօրիցի էմին որ հրչակուած է տաճկաց մէջ իւր յօրիցի

նած (տիվանի Զէհնի) գրքովը . Խատիճէի հայրը  
կը փափաքեր ունենալ մի թոռն , վասն զի ինք  
արու զաւակ չունէր . և սա հասաւ իր փափաքին  
ունեցաւ մի թոռն , բայց դժբախտաբար երեք տա-  
րի միայն ապրեցաւ և երբ նորա մահը տեսաւ  
պապը , թողու իր տունը և երկու ազջիկներն  
գնաց , և ան գնալն է որ գնացեր է . և քանի մը  
տարուց հետոյ Խատիճէի այրն ալ , մեռաւ մնաց  
իւր համբ քրոջ հետ մէկ տեղ , բայց ունէին բաւա-  
կան ժառանգութիւն , որով կը նային ապրիլ քա-  
նի մը տարինէր : Եւ քիչ ժամանակ անցնելուց  
հետոյ , կարնոյ մէջ թէճէպ Պապա անուն չէյխ  
ուզեց Խատիճէն որ նա կարնոյ մօտ Հայտարի  
անուն գիւղացի էր որ քանի մը տարի եւս քաղաք  
կենալին վերջը առաւ իւր կինն ու քենին եկաւ  
ընակեցաւ նորէն Հայտարի գիւղը , և եղաւ որ  
այն ժամանակները Ավրանլի գիւղից Ալի անուն  
մէկ մարդ եկաւ այս չէ.իսի քոյլ ծառայելու , որ  
տաճկաց մէջ (մի ըիտ) կըսին) այս միւրիտը պար-  
տաւոր է չէ.յսին հաճոյանալու համար ծառայել  
քանի մը տարի , որպէս զի կարողանայ անկէ  
(ինապէթ) առնուլ ըստ իրենց օրինաց . հետոյ առ  
չէ.յխ ուզեց իւր քենին ամուսնացնել միւրիա  
Ալիին հետ և յաջողեցաւ . թէպէտե քենին ինչպէս  
որ ըսինք համբ ու խուլ եղած էր , բայց տեսքով  
ու էր և գործօն . և տարիէ մը ետքը այս Միւ-

նիֆէն ծնոււ մի տղայ անուանեցին Շուքրի :

Շուքրի ծնունդը ըստ կարծեաց 1861 ին է ,  
որովհետեւ թուական չունէր այլ թէ ինչպէս որ  
Խատիճէն պատմել էր :

Եւ եղաւ որ քանի մը ամիսից հետոյ յիշեալ  
չէ.յխը մեռաւ և Խատիճէն իւր քրոջ հետ գարձան  
քաղաք առնելով տղան ալ և քանի մը ժամանակ  
անցնելուց հետոյ Միւնիֆէն ալ մեռաւ և տղան  
կը պահուէր իւր մոռաքրոջ Խատիճէի խնամքովը .  
վասն զի Խատիճէն զաւակ չունենալուն համար  
շատ կը սիրեր տղան . մինչեւ անգամ՝ իւր քրոջ  
շատ կը սիրեր տղան . մինչեւ անգամ՝ իւր քրոջ  
ողջ եղած տառէն ալ ինքը կը սնուցանէր , որովհե-  
տեւ Միւնիֆէն զուրկ է մնուցանելու կարողու-  
թենէ . տառջի պատճառը որ խուլ և ակարատէս  
էր երկրորդ կաթն ալ պակաս էր , և Խատիճէ  
այնշաբ սէր ունէր մանկան վրայ որ թէպէտեւ  
տղայ չունէր , բայց կաթի եկեր էր , (չեմ գիտէր  
այս ինչպէս կըլլայ միայն ես Շուքրիս հաստատ  
գիտեմ որ այնպէս ինձ մոլի սորուեցուցած էր  
իւր կաթին որ մինչեւ հինգ տարեկան եղած ժա-  
մանակս ալ գուրսից կուգայի ստինք ծեկու) Միւ-  
նիֆէի մեռնելին յետոյ , հայր ուզեց աղոտն բաժ-  
նել մոռաքրոջից և տանել գիւղը իւր եղբարց  
քոյլ . բայց Խատիճէն նախ աղաչեց յետոյ գէմ  
գրտ . որովհետեւ ինքը ծանօթնելու ունէր իշխա-  
գրտ . որովհետեւ ինքը ծանօթնելու ունէր իշխա-

որ ռամիկ մեծցած էր չէլ չէլալողացաւ տանիլ, հապա  
սախպուեցաւ խատիճէի հետ բնակիլ տանելով  
իրեն կին. բայց սորա մանկան հայր մի անշահ  
մարդ մը էր և տէրվիշական մոլար դաղափալներով  
կը շրջէր մի օր աստ միւս օր անգ. շէյխերու քու  
վը. տարիներով ոչ իր տունը կը հարցնէր ոչ ալ  
տղան. ոչ ալ հոգ կը տանէր նոցա պահպանու-  
թեան համար. երբեմն առուտուր անելով շրջէր  
և երբեմն հմայողութեամբ և իւր վասարկն ալ  
տէրվիշներու հետը կը փճացնէր. (Ետքը պիտի  
ցուցուի տէրվիշներու ոովորութիւնները) ճշմարիտ է  
որ եթէ խատիճէն չի լինէր աղան պիտի ձգւէր իր  
հօրեղբաց տունը և պիտի նմանէր նոցա տղոց,  
որոնք հիմա բոլըրովին անուս և կոեհիկ կապրին :  
Բայց նախուինամութիւնը խատիճէին սէրը դար-  
ձոցեր էր տղուն վրայ, որ կառավարէ աղան մինչ  
տասնուհինդ տարի կամ առաւել եւս, խատիճէն  
իր հօրմէ մնացած շէնքերուն մեծ մասը ծախեց և  
սատիր տուաւ տոկոսի, որոյ վաշխով կապրէր և  
և կապըեցնէր աղան. աղան երբ վեց առաւեկան  
եղաւ զրաւ իրենց թաղի մոլլային քովը դպրոց  
կարդ ալու և աղան մինչեւ տասն ու երկու տա-  
րեկան ժամանակին կարդաց և բաւականի սրամիտ  
լինելուն համար, շատ բան սորվեց կոռնի վրայ և  
մանկական փափառք մոփին մէջ, այնպիսի կերպով  
արմատ ձգեց մուհամմէտական կոռնի մոլար դա-

դափառները որ մարդոց կողմանէ անհնար էր նոցա  
արմատախիլ լինիլ դեռեւս ինքը եօթը տարե-  
կան էր սկսից (ծոմի) եւ նամազի եւ դպրոցը ինչ  
որ սորմէր տանը մայրը (խատիճէն) նորէն կըրկ-  
նել կուտար եւ առաւել պնդացնէր այն մոլար դա-  
ղափառները մանուկին մոքին մէջ. և երբոր Շուռք-  
րին տասն եւ երկու տարին անցուց, մայրը խոր-  
հեցաւ արհեստի մը տալ եւ տարաւ տուաւ մի հայ  
դերձակի մը քոյլ. որոյ անուն կարապետ է. Խա-  
տիճէն քրիստոնեայ կոչուածները մեծ առաջ-  
թեամ տոէր եւ ամենայն կերպով կը հայհոյէր  
նոցա կոռնքին . սակայն գիտէր որ նոցայ մէջ ար-  
ուագիտութիւն չը կայ. բայց մուհէմիտականաց  
մէջ զարհուրեկի կերպով այս մեղքին անձնատուր  
եղողներ կան. ուստի աղան այդ բանէ զերծ մնա-  
լու համար, հայու քով տուաւ միտին սու պարմա-  
նու որ և նամազի ժամանակներ հրաման տոյ եւ  
խրկէ (ճամին) Շուռքին: Երկու կամ երեք տարիի  
չափ սորվեցաւ յետոյ ելաւ նորա քոմից. եւ այս  
ժամանակ հայրը զօրք եղած էր, վասնզի սա հին պա-  
տերազմի ժամանակ զորք եղած է եղեր լայց դեռ-  
ընթացքը չաւարտած պատերազմի միջից վախեր  
եկեր է եղեր իր տունը, ու աս ժամանակին քըն-  
նելով գաեր էին. եւ տարէր էին զօրաց մէջ, եւ  
երբոր այս պատերազմը սկսեց մոյլին տասց աղաս  
պէտք է երթանք Պայտուրի թիւ պատերազմին,

հաւանականապէս թուս պիտի գայ այստեղ եւ ո՞վ գիտէ ինչ ինչ խռովութիւններ պիտի պատահի եւ մի դուցէ քեզ զնաս մը լինի , եւ ես տեսնեմ . եւ ելանք մօրս հետ գուացինք Պայպուրթ , նորա առջի էրիկին , Զէհնիի տունը , թէպէտեւ Զէհնին այն ժամանակը մեռած էր բայց Զէհնիի աղան ողջ էր , եւ շատ անդամ ինքը եկեր եւ գնացեր էր մեր տունը երբոր Արզումն էինք , եւ մէկ ամիսի չափ մնալուց հետոյ ինձ անուցանող խասիճէն մեռաւ հոն , եւ ես մնացի բաւական ժամանակ այստեղ եւ Զէհնիի տղայէն ալ բաւական բան սորված եմ , որովհետեւ ինքը լսւ դրագիր էր , երբոր դարուն եղաւ թուս եկած էր ի կարին եւ ինձ ալ ըսին թէ հայրդ եկերէ իրզինկեան ու քեզ կը կանչէ եւ ես ելայ , գնացի բայց չգտայ , եւ ըստ առնելով եկայ հօրս գիւղը , որ կարինէն վեց ժամ է (անուն է Ավանլի) եւ հօն գտայ զինքը եւ պատմեցի մօրս մահը . . . եւայն , յետոյ հայրս ասաց ինձ թէ տղաս թուս առերէ մեր քաղաքը , եւ մեզ պէտք չէ մնալ այստեղ , եւ ես ալ այնպէս նախապաշարուած էի , մուհամմէտականութեան մէջ որ , բնաւ չէ ուղեր թուսի երես տեսնել , եւ եթէ տեսնէի մեծ խղճահարսւթեան մէջ կիմայի) այլ երթանք ծախենք ինչ տեղ որ ունինք եւ երանք Պաղտատ , այն տեղեր , իմամներու դերու Բամները , եւ չէլիներ , շատ կան , ես անփորձ

եւ մոլար փափաքներով նախապաշարուած ըլլուրուս համար անմիջապէս սկսնցի , համաձայնիլ . մասացայ մօրս խօսքը որ կը ըստեր , նորա հետ մի համաձայնէ այդպիտի բաներու մէջ , եւ դիւզից եկանքք քաղաք ու տունը ծախեցինք եւ մեր շրերը փոխեցինք եւ հաղանք տէրմիշանի հանդերէներ եւ մինչ ան ատեն ես կանուչ մի անդամ կաղած էի ու անկէ հետէ շաբունակեցի . (բայց այս կանուչ կապելը ամեն մարդ չկննար . ոս միայն սէյխոներուն սեփական է , այսինքն անոնց որ մուհամմէտի սերունդին կը վնրաբերին) , և այս իրաւունքը հայրս կը պնդէր թէ ես ունիմ , որայնիւնը իւր հայրն ալ կապած է եղեր և ես ալ առաջ մի անդամ կապած էի , չէ թէ հօրս կողմանէ իրաւունք ունենալս գիտէի , այլ թէ մօրս կողմանէնը . թէ և հարկ չէր այս բանի վրայ այսչափ դրել , որ ոչինչ բան մընէ . սակայն ասիկայ կը ցուցնէ որ որչափ նախապաշարուած է այդ ժողովուրդը , բուն իսկ ես անոնցմէ ալ աւելի նախապաշարուած էի և յոյս կը դնէի ոչինչ բաներուն վրայ , երբ առանց Քրիստոսի էի . նաեւ կուզեմ յիշել որ սատանան շատ աշխատեց զիս Քրիստոսին գալ ըլ թողուլ , ձեռք առնելով այս միջոցը թէ ոգու սէյխու ես և (նէով վ էնպիայ) , սեռունդ մարգարէից . . . . եւայն Բայց օրհնեալ լինի Փրկչիս անունը ինչպէս որ ոսի հայրս պէքթաշի տէրմիշներու դաղտիառնե-

րուն մոլորուէր էր, անհնատուր եւս եղած էի պէտք»  
քաշելու . աւաջին անգամ աները որ ծախսեցինք ,  
ինքը ծխեց պէտքը և առաւ ևս ինձ . և սկսեցի  
անձս և Երիտասարդութիւնս ենթարկել մեծամեծ  
զսասներու , ոչինչ բանի հոգ չէ ընէր . և անոնց  
բնաւորութիւնը պիտի դրեմ իր տեղին , որոնք  
անձնատուր են «պէտք» կամ էսրարի :

Միւս օրը ելանք կարինէն դէպ ի էահսան  
խալայ և մէկ ու կէս ամիս մնացինք լոկ ուտելու և  
խմելու համար մի ուրիշ պէքթաշի տէրվիշի մը  
հետք , արդ ի՞նչ ի՞նչ խօսքեր չէ լսել , և մինչեւ  
անգամ մարդու բնութեան գէմ եղող տեսակ տե-  
սոկ օրինակներ չէի տեսնէր հոն , այնպէս որ եր-  
բեմն խելքո դլուխա յոզլելով կըսէի . այս ի՞նչ է  
Բայց շատ չը տեւէր , «այս ի՞նչ է » ին վրայ մը-  
տածելս , հապա իսկայն ծխել կուտային էսրարը ,  
մինչեւ որ բոլորովին մոռանալ տուին ինձ այս  
«այս ի՞նչ է»ն , և այնպէս եղաւ որ ես ալ ըսի  
թէ իրաւ ասիկայ է լսու բան . ալ բոլորավին մո-  
ռացայ ապագան թէ ի՞նչ պիտի ընեմ և կամ ի՞նչ  
պիտի ըլլամ : Ընդհակատակն սկսեցի առաւել սի-  
րել իմ անձս վնասող բաները ի զուր տեղ և գոյնս  
դեղնիլը ու բախութիւն կը սեպէի , կուրծքիս խըր-  
խըրալուն և ցաւալուն համար կըսէի թէ ասիկայ  
չնորհք մըն է . վերջապէս բոլոր այսպիսի վնասա-  
կար յատկութիւններով հաւասարեցայ ես ալ ա-

նոնց , իմ տասն ու վեց կամ տասն ու եօթ հասակիս  
մէջ , որմէ առաջ բնաւ անձս վնասներու ենթարկած  
չէի և ոչ ալ գինի և ողի կամ որ և իցէ արբեցու-  
ցիչ բան բերանս զարկած էի . ուրեմն չերկնցնեմք  
անկէ անցանք խոնուս և հոն բերդը մնացինք քսնի  
մը օրեր , գտնելով տէրվիշները , անկէ եկանք  
Մուշ , անտեղ ալ նոյնպէս ուտելով խմելով մնա-  
ցինք բաւական օրեր . հետեւապէս եկանք բաղէշ ,  
մնացինք շարունակ նոյն ընթացքով , դարձեալ ան-  
կէ Սղերթ , Ճէզիրէ , նոյն ընթացքը շարունակե-  
լով և օրերը , փողերը կորուսանելով :


Զախօ փոքր քաղաքն ալ քանի մը օր փճա-  
ցընելով եկանք Մուսուլ . ալ ինչ ըսեմ , աստեղ  
աւելի մարդեր գտանք և մանաւանդ . գիւղեր ,  
դրէթէ շատ գիւղեր . կան որ նորանք այս պէք-  
թաշի տէրվիշներուն հետ համախոհ են , թէպէտե-  
ունին տարբերութիւնք որոնք իւր տեղին պիտի  
դրեմ . և Մուսուլի գիւղեր եւս նոյն ընթացքը  
շարունակելով . բաւական օրեր կորսնցուցինք և  
յետոյ գնացինք Արվիլ քաղաքը այնահեղ եւս գը-  
տանք այս խարապաթ մարդիկնելը . . . . և յետոյ  
գնացինք , Ալթուն Քէօբրի կոչուած աւանը և այն-  
տեղ եւս գտանք ամենամոլի մէկը որ ինքը այն-  
տեղի երեւելի մոլլան էր որ քանի որ անիկայ չէի  
տեսած խեղճահարում էի այսպէս ընելուս համար .  
բայց նա ուրիշ բաներ ասաց ինձ թէ մենք այս

ընթացքով միայն կլնանք արժանանալ Աստուծոյ,  
եւայն, եւայն ։ Ասիկայ այստեղ սիւննի իմամի մը  
պաշտօն տնէր և տեղին ժողովուրդը, երբէքչը գի-  
տէր սոլտ այս ընթացքը, և եղաւ որ հայրս հիւան-  
գացու այսանք և գործանք Մաւսուլ, քաղաքէն  
երկու օր հեռու թէղ Խարար անուն գիւղ մը մնա-  
ցինք քանի մը ամիս, և այս գիւղին մօտ մէկ զիարէթ  
կար, խմամ թիզա անուն որոյ քովը բնակելու հա-  
մար քարայրէր կային և անոր ջլհորի ջուրն ալ  
լու էր : Վերջապէս ստակը լմցաւ և շատ խեղ-  
ճովթիններ քաշեցինք . բայց ոչ ստակիք համար,  
ետքը հայրս նոյն հիւանդացաւ խիստ սաստիկ և  
մատեցաւ մոհուանը գրէթէ, և գիւղացիք ալ աշ-  
խասում էին ինձ համոզնելթէ, քու հայրդ կը մեռ-  
նի և դուն կեցիր այստեղ և քեզի տուն ու տեղ  
տանք և բնակէ մեզի հետ, միայն թէ մեր տղոց  
կարդալ սորվնցուր և անոր ալ վարձքը զատ կու-  
տանք. վասնզի նոցա մէջ կարդացողներ խիստ սա-  
կաւ են, և եղածներ ալ թերի : Բայց քանի մը  
օրից յետոյ հայրս սուոզացաւ եւ նորէն նոքա  
ինդրեցին ինձ թէ թեպէտեւ հայրդ չկենար բայց  
դու կեցիր, նու չկլնար զորով քեղ տանիլ, եւայն.  
բայց ես չողեցի հօրս չնատղանդիլ, մանաւանդ որ  
ըստ տէրփիշական կարդին ալ մեծա համարէի եայն :

Յետոյ վերադասնք նորէն գէպ ի կարին,  
որովհետեւ այն տեղերու կլիման տաք էր եւ չին

գիմանար, միաք զնելով թէ երթանք ի կոմեա և  
որիշ կողմեր, և եկանք կարին . և յետոյ հօրս  
գիւղը, Ավանլի, և ձմեռ եղաւ, հայր զիս ան-  
տեղ թողելով գնաց, մի ուրիշ գեղ որ իր բարե-  
կամները տեսնէ ու դառնայ, և ճամբայները բըս-  
նուելով մինչեւ գարուն չեկաւ և ես մնացի Պէհ-  
ծէթ անուն կնկան մը տունը որ ինքը կարդացող  
կին մը էր և է այն չէլիք քոյրը որ մօրաքոյրա  
խասիճէ տոէր էր . սա կինը իր տանը վրայ ազ-  
գեցութիւն ունեցող ըլլալուն համար, նորա անու-  
նը կը չիշեմ որովհետեւ տափկա (Եօլ Օզիներուն)  
կոօնքին համոզուելն յետոյ իւր էրիկը եւ տղաքները  
ու հարսերը և ուրիշ քանի մը տրացիները մինչեւ  
իմ եղբայներէս մէկն ալ համոզած էր նոյն մոլուու-  
թեան . և ինքը խօսքով հարտար էր, և թէեւ հօր-  
եղբայր և հօրեղբօր տղաքներ ունէի հօն, սակայն  
սա երբէք չէր թողուր որ անոնց քով մնայի,  
մէր ցուցնելով և ամացեցնելով . բայց գու տես-  
բանը որ հօրս միտքը ինչ է եղեր :

Դա ինքը համոզուած է եղեր նոցա կոօնին  
(Եօլ Օզիներուն) բայց քանի որ գիւղէր թէ Շիւք-  
րին խասիճէի ինսամբով մուհամմէտական կոօնք  
ուսած է ինչպէս որ է կառավարութեան կոօնքը,  
ուստի գժուար կը լինէր զանիկայ համոզել . վասնզի  
Շիւքրին շատ բժտինդիր էր սիւնիութեան մէջ և  
բոլոր անկէ գուրս եղողները դժողքի որդի կը



Ճանչնար, ուստի հայրը խորհեր է որ եթէ մէկէն  
ի մէկ այսպիսի բան առաջարկուի, անմիջապէս  
պիտի մերժէ և անմիջապէս հօրը երեսին ալ պիտի  
չ'նայի, որովհետեւ չափահաս էր, ասոր համար  
խորհեցաւ սիւննիութեան ընթացքով մօտենալ,  
ասելով թէ, մեր քաղաքը Ռուս առաւ և արժան  
չ' մեղ հոս մնալ, որովհետեւ խորհեր է թէ քանի  
որ քաղաքի մէջ տուն աեղ կայ, սա չպիտի ճգէ  
զանոնք և դայ գիւղը, որպէս զի մնայ այնքան ժա-  
մանակ որ, մոռանալով իւր գրացիները և համախոհ  
ընկերները, համոզուի նոցա գաղափարն, և ուստի  
խորհեր է նախ առները ծախել տալ և այն առեն  
նորէն ասոնց քով չ'ըերելուն պատճառը սա է եղեր  
թէ, վասնզի առաջի անդամ այդպիսի բան տեսա-  
նելուն պէս պիտի խոժորի ասոր համար հարկ սե-  
պեր է առաջ տէրփիշութեանը քաշել (որովհետեւ  
ինքն ալ այն ճամբով գնացեր էր), վասնզի սիւն-  
նիներ ասոր հակառակ չեն, և նաեւ պատցինել և  
շատ ուրախութիւններ ու ետքը թշուառութիւններ  
ցոյց տալ, որպէսողի ան առենք կարողանայ (Եօլ  
Օղիներու) սէրէն համ զգալ, եւայլն . որ իրեն ալ  
այդպէս եղեր է . ինչու որ իւր մեռնելէն երեք օր  
առաջ բոլոր բանը ասաց Շիւքրիին . թէ ինչ տե-  
սակ ինքն ալ խափուէր է, խափետթիւն, և այս  
պէս յուսահատ մեռաւ, որ իւր մեռները տան  
պիտի գրեմ իւր ըրած խօստաւանութիւն եթէ  
ժամանակ ներեց :

Հիմա պիտի ցուցնեմ մուհամմէտականու-  
թեան մէջ թագուցուած այն ճիւղերը որ ամեն  
մարդ չ'գիտեր, վասնզի եթէ գիտնայ ալ թերի  
պիտի գիտնայ, ինչու որ նորանց բոլոր սովորու-  
թիւնները գրքով չէ, այլ աւանդութեամբ, տակէ  
ի զատ թէեւ գիրք ալ ունին բայց ապագրութեամբ  
չէ և այնչափ քիչ ու թագուն է որ մուհամմէտա-  
կաններ, նոցա անգիրք սնունը կուտան և սիւննի  
մուհամմէտական մը երբէք չ'հաւատար թէ նոքա  
գիրք ունին մինչեւ չ'տեսնէ : Սիւննի մուհամմէտա-  
կանք զասնոք կանուաննեն, ուամկաբար 1 (չուասէօն-  
տիւրէն), 2 (գլուղպաշ), 3 (քիթապորզ), 4 (բո-  
ֆըզի), ոմանք ալ (թիւրք), (թիւրքման), (չէպէք)  
և ուրիշները շահ (սէվէն), (էլլլասհի), (զայրէքի)  
և (եթմիշ) իրի պուտոք մէզհէպտէն տիշարի),  
եւայլն : Բայց իրենք, իրենց անուն կուտան,  
« եօլոզի » կամ « եօլուշաղի » « էրէնլէր » « կեր-  
չէքլէր » եւայլն, կոյ մէկ ճիւղ մըն ալ սոցա մէջ որ  
կանուանուին « ինձէ եօլի » :

Որովհետեւ մուհամմէտական կոօնը ընդհա-  
նուրին ծանօթ է և ամեն մարդ զրեթէ գիտէ, եւ  
անոնց մէջ եղած տէրփիշներու տեսակներ ալ զըւ-  
խաւորապէս տաս երկուքի բաժանուելով, անուն-  
ներով իրարմէ կը տարրելին, ինչպէս՝ գատիրի,  
պէքթաշի, նէգչապէնտի, բիւֆաի, թարիդի նա-  
զէնին, եւայլն . եւ ասնք շատ քիչ բաներու մէջ

կը տարբերին իրավմէ . ինչ եւ իցէ իմ նպատակս  
ասոնց վրայ խօսիլ չէ , վասնզի որպանք յայտնի են :  
Բայց իմ նպատակս Եօլղլիներու ու պէքթաշին  
ներու վրայ խօսիլ ու ետքը , աւետարանին լուսոյն  
ինչպէս ինձ համիլը պատմել է :

Եօլղլիք , ունին բաժանմունք , բայց ոչ հա-  
ւատքի կամ արարողութեանց , այլ անուանց , զր-  
օրինակ , ոմանք ի նոցանէ կոչեն (իւրեանխզրլի) ո-  
մանք (աղուիչէնի) ոմանք (պապամանսուրլի) ոմանք  
(գուրէջլի) եւ ոմանք . . . . . եւայլն : Նաև  
ոցա մէջ կան ոմանք ալ որ կոչեն (ինձէ իշլի) որ  
արարողութեամբ կը տարբերին վերոյիշեալներէն .  
Ընդ հանրապէս ասոնց ամեն ալ կը հաւատան թէ  
Աստուած կայ եւ է մէկ , բայց է ամենայն յամե-  
նայնի , այսինքն ամեն մնայուն բաները Աստուած  
է , իսկ արտաքին բաները ոչինչ . եւ ամիկայ պար-  
զելու համար (Սէլիմ Տիւանէ) իր գրքին մէջ կը սէ  
« Աստուած կամ նոյն է հոգին ոչ տեղ մը կուգայ  
եւ ոչ ալ տեղէ մը կերթայ , այլ անիկայ այս օրի-  
նակու իմացիք . գիցուք թէ , մէկ ծով մը կայ եւ  
նորու եղերը դրուած են շատ մը ամաններ որոնց  
տակերը ծակ են , եւ եթէ այն տակը ծակ ամաննե-  
րէն մէկը դրուի ջուրի մէջ կը լիցուի եւ երբոր  
հանուի կը պարտի , ահա այսպէս է մարդուն  
տորին ու մեռնիլը , եւ (վէ նէֆէխմթիւ ֆիհի րու-  
հիհի) ասկէ ի զատ ուրիշ բան չցուցնէր » եւ դար-

ձեալ կըսէ , « ստեղծութեան համար » ոչինչէն ալ  
բա՞ն կըլլայ , ոչ ամենեւին այլ թէ ինչ որ կայ .  
կար նաեւ ի զկզբանէ , և « Աստուած ստեղծեց » ը  
ուրիշ բան ըսել չէ , եթէ ոչ ցրուած բաները մէկ  
տեղ հաւաքեց , ըսել է :

Բայց նկատուելու արժան է որ ասոնք այնպի-  
սի վարդապետութիւններ ունին որ բոլորովին հա-  
կասական են իրարու և ինձ շատ գժուար է այն-  
պիսի կարգով գրել որ կարդացողը չձանձրանայ :  
Սորանց մէջը կան այնպիսի գաղափարներ որ բո-  
լորովին չը թողուր զիրենք հաւատալ թէ , աշխար-  
հըս ստեղծուեցաւ և պիտի աւրիփ . օրինակի աղա-  
զաւ ունին աւանդութիւն . թէ և Սորանն օր մը  
գնաց գաշուեր շրջելու և երբոր նա կերթար եկաւ  
տեղ մը որ երկու աւազէ լեռ գիզուած էին , խիստ  
մէծ և մի գեղատեսիլ կին կայնած էր լերանց  
մէջ տեղ ճամբու վրայ որ Սորաննը չէր թողէր  
անցնելու և Սորանն նորա գեղեցկութեան զմայ-  
շած կը նայէր և կը խնդրէր որ զինքը թողու անց-  
նելու , բայց կինը ասաց անոր , եթէ գրաւ մը  
ասս իմ քով յապացայց քո վերադառնալուն , կը  
թողում քեզ և Սորանն տուաւ իւ կնիքը և քնաց .  
ու երբ վերգարձաւ տեսաւ մի ամենատգեղ կին  
կայնէր եր այն տեղ , այնպէս որ չը ուզըլ երե-  
սին նայէլ վերջապէս Սորանն կը փնտրէր այն  
կինը որ իւր գրաւն ետ առնէ , իսկօյն տգեղու-

հին գոշեց, Սողոմոն որդի Դաւթի եկ կնիքու առ  
զոր դրեր իմ քով, պատասխանեց Սողոմոն, ես  
ոչ տուած եմ քեզ կնիք, և արդ ի՞նչ առնեմ,  
դու ո՞վ ես, կինը պատասխանեց, ես աշխարհն  
եմ որ մարդոյն առաջ գեղեցիկ կերեւնամ, բայց  
ինքս չեմ, և այսպէս կը խափեմ ամենը, ուրեմն  
եկուր կնիքու առ թէ որ ճանաչես, և հանեց մի  
ափ լեցուն կնիքներ իր ճեպէն և Սողոմոն չճանչեց  
իւր կնիքը, վասնզի ամենու վրայ ալ գրուած  
էին, Սողոմոն թագաւոր որդի Դաւթի, և ապշած  
հարցուց կնկան թէ այդ ինչ բան է, կինը ըստ,  
դու մի կարծեր թէ քէզմէ ի զատ ոյլ ուրիշ «Սողոմոն  
թագաւոր որդի Դաւթի» ներ եղած չն. կան գեռ  
հազարաւոր կնիքներ նոյն անուն և նոյն պաշտօնի  
տէր եղողներէն խափած և առած եմ. ինչպէս քեզ,  
և այս աւազագոյա լերինք որ կը տեսնես ես այս  
տեղ կայնած եմ և հարիւր անդամ հազար տարի  
անցնելուց հետոյ մէկ աւազի հատ մէկին վրայէն  
առնելով միւսին վրայ կը ձգեմ, և արդ կրնան  
յիշել թէ քանի հազար անդամ, հազար անդամներ  
տեղափոխուեր են և պիտի փոխուին, այս լերինք: «  
Եւ ուստի կայ գաղափար թէ մարդը մեռնելուց  
հետոյ «Եթէ արդար է» գարձեալ մարդ կը լինի  
և կուգայ աշխարհն, և ոյս է գրախտ որ մէկը  
մարդ լինի, իսկ եթէ չար է կը լինի անասուն որ  
անձուի այս է գժողք, և այսպէս ալ կընդունին

թէ ամենասուկալի պատիմն է տարերայ մէջը պը-  
տըախիլ, այսինքն մարդը մեռնելուց յետոյ կը գառ-  
նայ հոգի կամ հանքի և հանքէն երկաթի, կամ  
ուրիշ բանի. և երբոր այն բանը մաշի դարձեալ  
մաշուածքը կը դառնայ ուրիշ բանի. այսպէս բո-  
լը տարերը պախտի, յետոյ կուգայ մարդի, և  
եթէ նորէն մարդ եղած ժամանակը չճանաչէ ինք  
զինքը, մեռնելուց յետոյ նոյնպէս պիտի տանջուի,  
և անասուն դառնալու ու մարդ դառնալու դա-  
զափառները լիք են «գայզուարզ ապատալ» ի և  
«աճիզի» ի գլքերուն մէջ: իրենք կը հաւատան  
բոլոր մարդարէից Աղամեն առնելով, նաեւ Մու-  
համիմէար կընդունին մեծ յարգանօք որոյ սերուն-  
դից և կողներու ձեռքն է կըսեն իցենց փրկութիւ-  
նը այժմ, կընդունին նաեւ «գուրանը» բայց ոչ  
զուտ, իրենք կըսեն թէ հինգ գիրք եկած է  
«թէվրաթ» «գապուր» «ինճիլ» «գուրան» «  
«իմամ ճափէրի գիրքը» «ուստի պարտաւոր կը  
սեպեն զիրենք հետեւիլ վերջնոյն, կան նաեւ զա-  
նազան գլքեր իրենց մէջ որ. «պուլուզի էվլիա»  
անուններով կը կոչեն և մէկ «պուլուզի» մէջ  
այսպէս զըստած է, «Աղամն ու իւսյ երբ գրախ-  
տից գուրս ձգուեցան ապրում էին աշխարհիս վը-  
րայ, և երբոր ճնաւ գայէն և Աբել, յետոյ Աղամ  
ու Եւսոյ վէճ ըրին. մէկը կըսէր տղայք ինձմէ ի  
գոյ կուգայ, իսկ միւսը թէ ինձմէ, և հետեւապէս

վճռեցին փորձել և խւաքանչիւր մէկ մէկ ամանի  
մէջ պահեց , արդէն Ազգ ամը դաշտը արտ ցանելու  
կը պարապէ՛ը ընդհանրապէս , իսկ Եւան տան մէջ  
կերակուր կը պատրաստէր , և կը տանէր արտը ,  
բայց Եւան իր մարդուն լու չէր ծառայէր , այդ  
պատճառաւ Ադամ շատ դժո՞հն էր Եւայէն եւ էր  
արտում , մի օր երբ նորէն աղամ արտն էր , Սատու  
ամած մէկ երկնային տաղձիկ , «Նամի» խրկեց Ա-  
դամի տունը , եւ եկաւ որ Եւան տունը նոտած էր ,  
եւ ըստ Եւային , դու որ քու երիկդ դժո՞հացու-  
ցիր , այդ պատճառաւ ես խրկուեցայ նորա կուու-  
թիւն ընելու . ո՞ւր է քու մարդ , Եւան ասաց , դու  
նիստ ես կը կանչեմ , եւ աս ըսելով ելաւ հաց եւ  
կերակուր առաւ տարաւ արտը , եւ Ադամին շատ  
քաղցրութիւն ցուցուց եւ Ադամը շնորհակալ եղաւ ,  
բայց Եւան ասաց Ադամին ինձ երդուիր որ իմ ողջ  
չութեանս տաեն ուրիշի հետ չամուսնանաս , եւ  
Ադամը երդուաւ , եւ երբ իրիկուն տուն եկաւ .  
ահա «Նամի» հոն էր , եւ Ադամը արտանցաւ եր-  
դումին համար , բայց ահա իր պահած ամանէն  
Սէթ (Շիթ) դուրս եկաւ , սակայն մէկ ոսքը կաղ  
էր , (քանզի ասմաք ամաններու մէջ պահելին իրը  
քառասուն օր ետքը , Եւան գնաց նայեց եւ իւր  
պահածին մէջ ոչինչ չէր յայտնուէր իսկ Ադամին  
ոյն մէջ ջիղմը կերեւնար , եւ Եւան զայս տես-  
նելով նախանձեց եւ ամանը շարժեց ու այս պատ-

ճառաւ կաղ եղաւ) , և Ադամ «Նամին» պսակեց  
Սէթի վերայ որմէ ծնուեցաւ բոլոր մարդարէներ ,  
որովհետեւ անոր մէջ Եւայէն , այս մեղանչո-  
ղէն , խաբուղէն մաս չկայ , և ուստի մենք ենք  
(քիւրուհի Նամի) և սուրբ սերունդ որ թէպէտեւ  
աշխարհը մեզ , «Եթմիշ իքի միլէթաէն» դուրս  
կը կոչ . — և ենք իսկ , վասնզի Սէթը կաղ լինելուն  
համար (պուշուգ) կէս ըսին , — բայց ինքը չը հաս-  
կընար » : Այս գրուածին պէս գրուած է և բաց ի  
գրուած լինելին իրենց սէյյիսները դոց ալ գի-  
տեն , իրև աւանդութիւն :

Մարդարէները կ'ընդունին , բայց իրենց կեր-  
պով , տասն ու երկու առաքելոց համար կըսեն թէ  
նոյն հոգիներ են որ Մուհամմէտ , Ալիի սերսւն-  
դէն եկան տասն ու երկու իմամներ և թէպէտեւ  
Մուհամմէտն ու Ալին հաւասար կ'ընդունին , ըստ  
երեւոյթի բայց ըստ ներքնոյն նախ Ալին բարձ կը  
գասեն . Մուհամմէտը ցորեկ է , կ'ըսեն իսկ Ալին  
գիշեր , և գիշեր աւելի յարգելի է իրենց մէջ քան  
զցերեկ , և հետեւեալը կը կարդանք (Եմինի) ի  
գրքին մէջ , որ ձեռագիր 800 երեսի չափ գիշե-  
ք մըն է : Այսպէս կ'ըսէ Ալիի մտախն՝

«Մի օր Մուհամմէտ նստած էր իր տեղը և  
Ալին ու մնացեալ ժողովուրդը ներկայ էին և ահա  
«Գարբիէլ» հրեշտակը պատգամ բերեց Մուհամ-  
մէտին և երբոր աջ կողմը Ալին տեսաւ , իսկոյն

խոնարհութիւն մասուցանելով համբուրեց Ալին, Մուհամմէտը երբ տեսաւ զարմացաւ որ հրեշտակը ոչ ոքին այնպէս ըրած չէր, այդ բանը, ի՞նչ է ով գարբիէլ հարցուց, « պատասխանեց » ետ Մուհամմէտ, Ալին իմ առաջնորդո (ձար) է, « Գարբիէլը » և « ըստ » ով Մուհամմէտ երբոր Աստուած ինձ ստեղծեց գեռ ևս ոչ ինչ ստեղծած չէր, և ես չէի գիտէր իմ ստեղծուելը, այլ թեւ եր ունէի որոնցմով կը թռչէի պարապութեան մէջ, և երեք հարիւր տարուան չափ ժամանակ թռայ և ոտքս գնելու տեղ չկար և թռչելով թռչելով եկայ, յանկարծ պարապութեան մէջ կառուցուած կանոչ գմբեթի մը վրայ, որոյ վրայ քիչ դեռ չհանգստացած, ձայն մը լոեցի գմբեթի մէջէն որ կըսէր ինձ, ես ո՞վ եմ, դուն ո՞վ ես, պատասխանեցի, դուն դուն ես, ես ալ ե՞ս եմ: Եւ դեռ խօսքը բերանս էր, թեւերս այլեցան և ես ինկայ ցած պարապութեան մէջ. ալ չեմ գիւ տեր որչափ ժամանակի չափ ինկայ մինչեւ որ թեւ երս նորէն առողջացան (բուսան) ու դարձեալ 300 տարիի չափ ժամանակ թռչելով եկայ դասայ նոյն գմբեթը և կեցայ նոյն տեղ, և լոեցի նոյն ձայնը և պատասխանեցի նոյնպէս, և թեւերս այլեցան նոյնպէս, ինչպէս առաջ, և երբոր գարձեալ թեւ երս լաւացան նորէն թռչում էի, բայց անցեալ ները մտաբերելով շատ կը տիրէի, և այն միջոցին,

մի ծեր սպիտակ մոռուք ունեցող մը, տեսայ որ ինձ կանչեց և ասաց մինչեւ երբ դու անխոհեմութեանդ պատճառաւ չարչալուիս, եկուր քեզ սորվեցնեմ, երբոր կերթաս գմբեթի վրայ և լսես առաջին ձայնը, որ քեզ նորէն պիտի ըսէ. ես ո՞վ եմ, դու ո՞վ ես. պատասխանէ թէ, ես արարած եմ, իսկ դու արարիչ, ուրպէս զի նորէն պատժի չը ենթարկուիս, և ես գնացի այսպէս ըսի և ազատուեցոյ պատժուելին և երբոր մգբեթի դուան վերայի պատուհանէն նայեցայ ահա կանթեղ մը կախուած էր և մէջ լուսով լիք, և այս լուսը երեք տեսակ էր առաջին սպիտակ, որ Աստուծոյ լոյսն էր, երկրորդը կարմիր որ Ալիի լոյսն էր (այս պատճառաւ գըզըլազաշ կոչուելուն չեն ցաւէր) և երրորդը կանանչ, որ Մուհամմէտի լոյսն էր (այս պատճառաւ է որ տանք երբոր մեղքի կը մեռնին այս Յ անունը այսինքն). եա՛ Ալլահ, եա՛ Մուհամմէտ, եա՛ Ալի, անուններով կատարեն արարողութիւնը, որ երբ ալարողութեանցն վրայ խօսելու լինիմ, պիտի յիշեմ, « ասոր համար ես կարծեմ որ ասոնք ուրացող, կամ մոլորվող, քրիստոնեաններէն եղած են»): Գանք որ Գարբիէլ երե լուսոյ վրայի խօսքը լմնցուց, ասաց Մուհամմէտին (կըսէ դիրքը) ո՞վ Մուհամմէտ, այն Ալի որ ան առեն ինձ սորվեցոց այդ բանը. Ալին էր որ հիմա տեսնելով զդացի, և արդ ես պարտաւոր եմ՝ իմ ուսուցիչս պատուել:

որովհետեւ այն ժամանակ գեռ ոչ ոք ստեղծուած չէր, նա ինքը իւր անհասկընալի հրաշքով ինձ առաջնորդութիւն արաւ, ևայլ» :

Ուստի կը հետեւցնեն թէ Ալին կար զկզբանէ, և մի աւանդութիւնն ալ սա է որ, կըսեն «մի օր Մարիամը մի երիտասարդ տեսաւ (թող այլք ըսեն թէ գաբրիէլն էր) և այն երիտասարդը Ալին էր որ երբ մի ազդու հայուածքով մը նայեց Մարիամին և յղացաւ անիկայ իսկոյն » :

Նաև կայ աւանդութիւն թէ «Ալին Աստուածաշունչի մէջ յիշուած է որ է Եղիան, որ Եղիան ինքն Ալին էր իսկ աւետարանի մէջ Յովհաննէս Մկրտիչ, որ բուն Ալին էր, իսկ գուրանի մէջ Ալին որ նոյն ինքն էր, և յետոյ. «Հաճի Պէքթաշի Վէլի» , որ նոյն Ալին էր, վերջապէս նա միշտ աշխարհիո մէջ է. և Մէհմին որ նոյն ինքն Ալին էր, «Մեհտի մաղարատա որըր օլսի » խօսքն ալ ունին որ կընդունին թէ վերջը պիտի յայտնուի, չէ թէ նոր պիտի ծնանի, ինչպէս սիւնիները կընդունին. և այս Ալիին հին կտակարանին մէջ Եղիայ և նորէն, Յովհաննէս, գաղափարը, «Վիրանի Սուլթան» ի մէջ գրուած է որ տակէ իբր վեց տարի առաջ տպագլուեցաւ Պոլիս :

Եւ «գայզուսը ապտալ կ'ըսէ, յանկարծ Տէրվիշը տեսայ որ կերթար մէկդի եղիր արագաշտին մէջ և հասաւ այնտեղ ուր որ տատանան

ու դեւեր կուզէին Սողոմոնը մալոցնել, բայց Սողոմոնը անոնց խարեւոթիւնը տեսած ատեն Ալին կը նայէր Սողոմոնի աչքերիցը, և ահա (մէն օն էմ քի մէն տանէմ) :

«Այսինքն թէ ես գիտեմ որ Տէրվիշ ես եմ Սողոմոնը ես եմ ու Ալին իմ աչքերէն կը նայի և աս բաներ կը տեսնեմ իմ մարմնոյս մէջ և դեւերուն չեմ խարուիր, և ակեղերքը իմ մէջս է, ի սկզբանէ ի վեր եղած բաներէն, և ի յաւիտենից լինելու բաներէն բան մը պակաս չէ իմ մէջս, թէ դրախա, թէ գժողք, թէ հրեշտակ և թէ ստանան, թէ հաւատացեալ և թէ անհաւատ, եւայլն եւայլն, ամենը իմ մէջս է եթէ կամենամ տեսնել, և վերջին դատաստան ալ «կը յաւելու թէ », իմ մէջս է, հրամանաւն կամ օգնութեամբն «Հազրաթի սուլթան Ասլար » ի այս ամենը կը կառարեմ: Այժմ թողենք պէքթաշիներու մալրութիւնները որ վերջը եթէ ժամանակ եղաւ կը գրեմ:

Հիմա աստեղ խօսեցանք քիչ մը Ալիի վրայ ունեցած գաղափարնուն վրայ, բայց աս ալ կայ որ կայ իրենց մէջ աւանդութիւն թէ ամենէ առաջ, տասներկու իմամներու հոգիները ստեղծուեցան, կամ թէ կային. և կայ աւանդութիւն թէ, ֆաթիմէի, և Հասան ու Հիւսէյնի, հողիք կային նախքան զամենեսին :

Եւ կայ աւանդութիւն թէ առոնց ամենը մէկ

հոգին , և կայ խօսք թէ Հաճի Պէքթաշի վէլիի  
հոգին այն հոգին է : Նաեւ կայ աւանդութիւն  
թէ , հիմա եղող սէյտ կամ սէյտները կը կրեն  
նոյն հոգին , և թէ ան հոգին Աստուած է :

Փրկչին 1879 թուականը՝ նոր սկսած էր , երբ  
առաջին անգամ տեսոյ Տէր Յիսուսի աւետարա-  
նը , հետեւեալ պատեհութեամբ :

Հօրս հետ կարինէն եկած էինք Եվրանի գիւ-  
ղը որ կիյնայ կարնոյ արեւմտեան կողմը վեց ժա-  
մու ճամբայ հեռաւորութեամբ : Այս տեղ հօրս  
հետ ընդ միասին քանի մը օր կենալէն յետոյ  
հայրո իւր բարեկամներէն հրաւիրուելով գնաց  
Բանակապան գիւղը որ մինչեւ գալուն եւս մնաց .  
իսկ ես կը կենայի այս տեղ Պէհճէթ անուն մի  
կնոջ առւնը որ ինքը քիչ մը ուսեալ լինելուն հա-  
մար՝ իւր ոբուոց կարգը դասելով զիս շատ կը սի-  
րէր , այնպէս որ թէպետեւ հոս ես երկու հօրեղ-  
բօր առւներ ունէի , սակայն ինքը չէր ուղէր որ  
անոնց առւնը կենայի . այլ թէ կ'ըսէր մեր առւնը  
կեցիր որ միատեղ կարդանք և խօսինք , մինչեւ  
որ հայրդ դայ :

Մի օր այս կնոջ գրքերուն մէջ գիւք մը տե-  
սայ որ ագիէ առաջ տեսած չէի . գիւքը բացի և  
սկիզբը կարդացի որ Աւետարան է աւաճկաց լեզ-

ուտ , հարցուցի կնոջ թէ այս գիւքը ո՞ւսկից է .  
այդ գիւքը ո՞վդիս բերեր է Ռուսաստանէն «պա-  
տասխաննեց կինը » ուր որ գերի տալուեր էր : իսկ  
ես շարունակեցի կարդալ Մատթիոսի առաջի գըլ-  
խէն սկսելով և գեռ գլուխն չէի լմնցած այնպէս  
կը յիշեմ որ գուրսէն մարդ մը եկաւ և սկսեց  
ինձի հետ խօսիլ և կարդալ մնաց , և գրեթէ ա-  
սոր վրայ երկու ամիս անցած էր , օր մը յանկարծ  
միտքս եկաւ գիւքը . ուստի գիւքը առի և բացա-  
ծիս պէս պատահեցաւ Յովհաննու 10րորդ գլուխը  
որոյ միջի խօսքերը շատ դիպան ի՞նձ թէեւ գա-  
ղափարներ օսար լինելուն համար այնչափ չէի  
համեստ և երբ կարդալով հասայ 31-39 համար-  
ներուն մեծապէս սիրաս վրգովեցաւ , որովհետեւ  
յաղթահարուածի պէս եղալ և նեղանալով ըսի այս  
ինչ հայհոյութիւն — Աստուծոյ որդի — միթէ ես  
«միւշըր» պիտի ըլլա՞մ . և կամ ի՞նչպէս կարե-  
լի է որ Յիսուս իրեն համար այսպէս ըսած ըլլայ .  
ուստի ձգեցի գիւքը , այլ եւս չկարդացի երբէք  
քանի որ այս տեղ էի :

Այս տեղ ուրիշ գէպք մը ալ պատահեցաւ  
ինձ , աւելքոդ չսեպուի յիշելու . յիշեալ կնոջ  
տէգրը կմրահ խօճան ունէր միամօր որդի մը որ  
նաեւ ամսւանացուցած ալ էր . եւ այս ձմեռը սորա  
որդին մեռաւ եւ սուգի օրեր անցնելէն յետոյ սա  
թէ այլոց միջոցաւ եւ թէ ինք անձամբ ինձ առա-

ջարկեց թէ . — Եկուր իմ որդւոյս տեղը անց' իր քեզի կին առնելով իմ հարսս, բնակէ ինծի հետ, եւ գիս մխիթարէ ես արդէն աշեւորած եմ ու կինս ալ պառաւէ, երբոր մեռնիմ ամենայն ինչքս քեզ կը ձգեմ, բայց ես իմ մէջս խորհեցայ թէ, եթէ ասոր առաջարկութիւնը ընդունելով մտնեմ իր տունը, յետոյ մարդիկ պիտի ըսեն թէ իմրահ խօճայի շու քին տակը մեծցաւ . Երկրորդ ասոր հարսը ի կին առնելէն յետոյ, գուցէ օր մը բարկանայ եւ ըսէ ելք իմ տունէն ձեզ ի՞նչ պարագունիմ . եւ ասիկայ անտանելի բան է . ուստի պատասխանեցի իրեն թէ, չեմ կրնար . ձեր առաջարկութիւնը ընդունիլ սա կայն, ինքը իմ պատասխանէս չյուսահատելով, զիս կը կանչէր իւր տունը եւնըստելէն յետոյ դիրքը բերէր եւ կը կարդայինք յետոյ պատճառով մը գուրս կ'ելլէր եւ ինծի ալ կ'ըսէր թէ գունիստ մինչեւ օր ես գամ . եւ ինքն ելլելէն քիչ մը վերջ իր կին ալ գուրս կելլէր . եւ տունը կը մնար հարսը . բայց բանը հասկնալով ես ալ անմիջապէս կ'ելլէի եւ կ'երթայի, ըսելով մի գուցէ զրպարտաթիւն մը ընեն իմ վրաս թէ որ այս տեղ նստիմ . Երեք անգամ այս մարդը զիս այսպէս կանչեց եւ յետոյ յուսահատելով թող տուաւ :

Եւ երբոր գարունը բացուեցաւ հայրս եկաւ քովս եւ ըստւ ինձ — որդի ես թերսօր գիւղը Ալի Պէկին խօստացայ որ գուն երթամ անոր որդւոյն

կարդալ սորվեցնես մի ժամանակ . ուրեմն երթանք հոն ըսելով . գնացինք և քիչ մը ժամանակ Ալի Պէկին տղան կարդացնելէն յետոյ գիւղացիներէն ոմանք եկան այս մարդուն տունը և ըսին հօրս թէ — քու որդիդ մեզ ուսուցիչ և իմամ լինի . և վարձքը ինչ որ է մենք կուտանք . ինքը թող մեր տղաքները կարդացնէ . և օտար մարդիկ եկած տտեն անոնց համար աղոն կանչէ և նամազներուն առաջնորդէ . մենք մեզի համար այդ բաները չենք պահանջէր միայն մէջը պսակ կարելն ու մեռել թաղել հարկաւոր է . հայրս ալ համաձայնեցաւ անոնց և ես ալ ընդունեցի ու մնացի այնտեղ, և կը կենայի նորէն Ալի Պէկի տունը — այս Ալի Պէկը . կը կոչուէր որդի իւրեանց Խզըրի, եւ եր Փիր (առաջնորդ) տեղացւոց որովհետեւ այս տեղափիր (առաջնորդ) մեծագույն էին որոնք մեծապէս կը ցիները, եօլօղիներէն էին որոնք մեծապէս կը տարբերին միւս մուհամմէտականներէն . եւ հայրս որ մեծաւ մասամբ համոզուեր էր անոնց կրօնքին, եւ ուստի թէ յիշեալ Ալի Պէկին եւ թէ գիւղացւոց ապօբերած է եղեր որ իւրեանց կրօնական արարուղութիւնները ինձմէ չպահեն որ թերեւս ես ալ համոզուիմ նոցա գաղափարաց . գալով ասոնց կրօնքին մեծ եւ խիստ անկարգ մոլորութիւն մի է առաւել քան գ'կրօնս միւս մուհամմէտականաց :  
' ի վերայ այսր անցաւ մի քանի օր եւ ես եկայ ի կարին որպէս զի երթամ այն մօլլայէն տրաօնու-

թիւն եւ հրաման ստանամ. վասնզի թէեւ այնտեւ զացիք այս բանը բանի տեղ չէին դնէր, սակայն իմ խիզճու չէր ընդունէր առանց արտօնութիւն եւ աղօթքի այդ պաշտօնը վարել. եւ ուստի մի ընծայով գնացի, մօլլային եւ ընդունեցի անկէ այս արտօնութեան աղօթքը. եւ երբ մեկնեցայ անկէ ահաւասիկ ուստայ կարապեաը հանդիպեցաւ ինձի շուկային մէջը, որոյ մատը երեք տարի աշտկերտութիւն ըրած էի առաջ. գերձակութիւն սու վորելու համար. այս մարդը ինձի հետ խօսելով տարաւ իր խանութը. յետոյ սուրբ բերել տուաւ եւ խմեցինք. վերջապէս սկսեց մանրամասնաբար հարցնել իմ վրայով՝ թէ ո՞ւր կը բնակիմ և ի՞նչ գործով կը սբաղիմ. եւ թէ այնտեղ որ ես կը բնակիմ հիմա, մարդիկը ի՞նչպէս են. եւ ինձի հետ ի՞նչպէս կը վարուին, եւայն եւայն. երբ իւր հարցումներուն պատասխանելը լմնցուցի. ելայ եւ գեռ շատ չէի հեռացած խանութէն, գոչեց թէ խնդրեմ որ իրիկունս տունը գաս. յատուկ կըս պասեմ քեզ, ես ալ շատ աղէկ կուգամ ըսի եւ երբ իրիկուն եղաւ, գնացի իւր տունը. ու սկսեց դարձեալ իմ կեցած տեղոյս վրայ առաջինէն աւելի մանրամասնաբար հարց ու փորձ ընել. վերջը ըստ ինձի թէ հօն ո՞ւ մարդոց հետ որ մտերմութիւն ունիս, խրկէ իմ քովս երբոր քաղաք գալու լինին, եւ ես քու սիրոյդ. համար, զանոնք կը

պատուեմ և եթէ պէտք ըլլայ, վոխ ստակ ալ կուտամ անոնց, և կամ թէ որ ապատիկ ապրանք գնելու ըլլան, ես անոնց կուտամ կամ թէ իմ երաշխաւորութեամբ ուրիշներէն կ'առնեմ. միայն թէ գու ծանաշես զանոնք. որոց համար այսպէս պիտի ընեմ, և երբ քու խօսքովդ անոնց խնդիրքը կատարեմ, այն առեն քու պատիւդ ալ կ'աւելանայ անոնց մէջը և այսպէս քեզ լսու կը լինի:

Ես ալ երբոր գիւղը եկայ և քանի մը օր անց նելէն յետոյ, Ալի Պէկն ու մի քանի դրացիները կարին երթալու եղան, և ես պատմեցի իրենց ուստայ կարապետի վրայով, երբ ըսեցին շատ մը ուրախացան և ինձմէ թուզթ մը իմող նեցին որ երթան գտնեն զինքը, ես ալ մի թուզթ զրեցի և տուի իրենց, ու իրենք գնացին. — ասոնք կերթան և գտնելով ուստայ կարապետը նամակը կուտան իրեն, և ինքը իտկոյն նամակը կարդացնել տալուն պէս, զանոնք կը հրամեցնէ տունը և երկու զիշեր հիւր ընդունելով, մեծապէս կը պատուէ ու դաշու տաենին ալ իրենց պէտք եղած բանելը ապատիկ կուտայ իրենց, և ասոնց գործին համար որչափ որ պէտք եղեր է, այնշտոփ ալ ստակ վոխ կուտայ, յետոյ ասոնց հետ խորհելով, գտապար աղբար ու նուն հակի մը բաւական ապրանք տալով հետեւնին կը խրկէ: Մէյ մալ տեսայ որ եկան գիւղը, Ալի կը խրկէ: Մէյ մալ տեսայ որ եկան գիւղը, Ալի գիւղ կարապետէն շնորհակալ լինելը յայտնելէն

վերջ Գասպար աղբարը հանեց մի նամակ ինձ ,  
որուն մէջը այսպէս գրուած էր : « Սիրելի Շիւքը  
• . . . . յատկապէս կը բարեւեմք զքեզ հանդերձ  
բոլոր տամբ . . . ահաւասիկ Գասպար աղբարը ու-  
զարկեցի քեզ հետը դնելով իբր երեսուն ոսկոյ  
ապրանք որ այն կողմերը վաճառէ , մասնաւորա-  
պէս ապառիկով մանաւանդ ցորենով՝ ու ցորենն  
ու կիսրար ցանել տալով . միայն թէ քո ձեւամբ  
լինի . վասնզի ինքը խեղճ մարդ է եւ անուս , ուստի  
նորա հաշիւն ալ խնդրեմ որ դու պահես , եւ այնպէս  
ընես որ ինքն ալ շահուի , որովհետեւ աղքատ եւ  
ընտանեաց տեր մարդ մըն է . մնամք քեզ բարեք  
ուզող ուսադ կարապետ , եւայլն » : Երբոր նա-  
մակը կարգացի , շատ լաւ ըսելով յանձն առի ինչ  
որ գրուած է Գասպար աղբօր մասին կատարել .  
վասնզի արժանի էր բարիք ընելու :

Ասոր վրայ քանի մը օր անցնելէն յետոյ , օր  
մը գիւղացւոց հետ սենեակը նստած կը խօսակ-  
ցէինք , եւ ինչպէս եղաւ որ խօսակցութիւնը եկաւ  
գրոց վրայ , այն միջոցին ես ալ ըսի թէ Աւետա-  
րանը թուրքերէն թարգմանուած կայ . իսկ նոքա  
պնդեցին թէ չկայ . յետոյ ես ըսի թէ տեսած եմ  
Պէհճէլծ խանըմի տունը , Էվլանի դիւզը , բայց  
անոնք դարձեալ պնդեցին թէ չկայ . այս միջոցին  
մի երիտասարդ խօսակցութիւնը ընդմիջատելով՝  
յարեց թէ ես առտուն պիտի երթամ քաղաքը

նթէ թուղթ մը գրես . գալու ատեն արդէն ճամ-  
բուս վրայ է կը հանդիպեմ Պէհճէլթին տունը , եւ  
կը բերեմ , ես ալ նամակ մը գրեցի տուփ իրեն .  
Երբ գնաց եւ վերադարձաւ , նորէն նոյն սենեակ էր  
ելքոր հարցուցի թէ քրեւեցի՞ զիւկը պատասխա-  
նեց երիտասարդը թէ , ո՞չ , չտուաւ , ան ատեն ըսի  
թէ վնաս չկայ , երբոր ես երթամ քաղաքը թէ որ  
գտնեմ մէկ հատ կը գնեմ , մի քանի օրից յետոյ  
եկայ կարին . ուստայ կարապետի խանութը նըս-  
տած ատենս հարցուցի թէ գուք գիտէք արդեօք  
այստեղ թուրքերէն Աւետարան կը գտնուի : պա-  
տասխանեց թէ այս Փարմասիոններ կը վաճառեն :  
Ժամանակը իրիկուն լինելուն համար եկանք իւր  
տունը , երբոր առաւօտ եղաւ , ըսի թէ ուստայ  
երթանք մի Աւետարան առնենք ինծի համար ,  
քիչ մը մտածելէն յետոյ , ասաց թէ , ես հիմա  
ուրիշ տեղ կերթամ , եւ անկէ վերջը կ'երթամ Պ.  
Համբարձումի խանութը ու կ'ըսեմ իրեն թէ որ  
կայ , մեկը քեզի տայ , դու յետոյ եկուլ խանու-  
թէն առ , քանի որ խանութը կը ճանչնաս , այն-  
տեղն է որ մեզի համար մանուսայ կ'առնէիր : ին-  
քը երթալին ես եկայ Պ. Համբարձումի խանութը ,  
բայց ինքը հոն չէր , այլ թէ երկու երիտասարդ  
կայնած էին . երբոր ուզեցի Աւետարանը . ասոնք  
իրարու մէջ հայերէն խօսելէն յետոյ՝ (այն ժամա-  
նակ ես հայերէն չէի հասկնար) երեսուն դահեկան

ուղեցին մէկ աւետարանին . ես ալ չ'առի և թուզուցի . գնացի մուհամմէտական գրածախներու քովը որ ուրիշ գիրք մը առնեմ անոր տեղը . և առի մի գիրք ու երբոր կուգայի ընկերներու քով համբաս հանդիպեցաւ զ . Սեւորդեսնի խանութը , անմիջապէս միտքըս եկաւ թէ այս մարդն ալ անոնցմէ է , և որովհետեւ երբոր ես աւստայ կարապետի քով աշտկերտ էի , սրբոց տօնի օրեր իր հետը միասին երբեմն ասոր խանութի առջեւէն կ'անցնէինք և միւս լրւսաւորչականաց խանութներ փակուած իսկ ասոր խանութը բաց տեսնելով կը հարցնէի թէ . ուստայ , սա ալ ձեզմէ չէ հապա ինչ խանութը չ'գոցէր . կը պատասխանէր թէնա ֆարմասօն եղած է . և անոնք բաց ի կիրակի օրէն ուրիշ օր չեն պահէր » , ուստի գնացի քովը և երբոր Սեւորարան հարցուցի , պատասխանեց թէ զ . Համբարձումի քով կայ . — ըսի երեսուն դահնեկան ուղեցին և ես չ'առի : Ոչ ըստ հինգ դահնեկան է , գնա՞ ինձէն բալե ըրէ և ըսէ զէորդ Սեւորդեան զիս ճամբեց , նա կուտայ : Երբոր եկայ զ . Համբարձումը ինք խանութն էր . եւ առի ու գնացի ընկերներու քովը և ելանք ճանապարհուղելու . բայց ժամանակը բուական անցէլ էր . ուստի իրկունը նաև զինքը և ուղեցի իւր գրած թէ այս իրիկուն ես բան մը կը գրեմ և կուտամ ձեզ . և երբոր արշալուսին ելանք ճանապարհուղելու , զարթուցի զինքը և ուղեցի իւր գրած թուղթը . շատ վնարելուն յետէ թղթի կարը գըտաւ թունիրի մէջ որոյ մեծ մասը այրէր էր . քանզի ըստ վնականաց սովորութեան սա ալ տունը թընան կուշտը կը քնէ եղեր և գիշեր գրելուն վերջ

Երեկոյին պատեհեցայ Յովհաննէս անունով

Քովը դրէր է որ պատրաստ լինի որ առատուն չուտ-  
տով ինձի տայ, սակայն գիշեր ինկեր է թունիր .  
վերջապէս այն կէս կտորը առնելով ելանք ճամբայ :

Երբոր կը ճամբարդէինք մեր ետևէն երկու  
ճանապարհորդ եւս եկան և հասան մեղ, ճանա-  
պարհով ամեն մէկերնիս մէկ առարկայի վրայ խօ-  
սելով կ'երթայինք, և այս նորեկներէն մէկը եղե-  
լութիւն մը պատմեց . թէ « ես մեր քաղաքի մէջ  
մի հայ աղջիկան ոիրահարեցայ . և մի քանի ան-  
դամ ասոր խօսք թալելէն վերջը իմացայ որ ինքն  
ալ զիս կուզէ . յետոյ մի անդամ իրեն առանձին  
ըսի թէ եկուր, միւսլիման եղիր քեզ առնեմ . աղ-  
ճեկը պատասխանեց թէ . կը լինիմ եթէ զիս կըր-  
նաս փախցնել այնպէս որ յետոյ դարձեալ հօրս,  
մօրս և մեր առաջնորդին ձեռքը չիյնամ . ես ալ  
ըսի թէ ի՞նչ կըլայ անոնց ձեռքը իյնարվդ . թէ  
որ գուն ըսես թէ ես միւսլիման եմ . անոնք քեզի  
բան մը չեն կրնար ընել, քանի որ կառավարու-  
թիւնը մերն է, ինչ կերպով ալ ըլլայ ես զեկը  
կ'ազատեմ . ասաց թէ որ այնպէս է չեմ գար . յե-  
տոյ ես եկայ . ինկերիս քովը որ ինքը ինձմէ խե-  
լացի էր, պատմեցի իրեն աղջկան ըսածները եւ  
ինքը խորհելով ինձ ըսաւ թէ, գնա աղջիկը փախ-  
ցուր միւֆթիին տունը եւ իրեն սորվեցուր, որ միւֆ-  
թիին այսպէս ըսէ . « թէ ես այս գիշեր երազիս  
մէջ տեսայ որ մի կանաչ ալմոռի վրայ նստած էր

մէկը և իւր երեսէն լոյս կը թափուէր և զիս տես-  
նելով լսաւ աղջիկս դու իմ ժողովուրդ (բա)՝  
ես, շուտով վկայութեան խօսքը ըսէ, և խոկոյն իմ  
լեզուս բացուեցաւ և ըսի լախահէ իլլալսէ մու-  
համիմէտ եայն . յետոյ ես անոր ըսի թէ, հիմա  
թէ որ հայրս և մայրս ու մեր մեծեր լսեն թէ  
ես միւսլիման եղեր եմ ինձ կը չարչարեն . « ասաց  
ոչ դու գնա՛ միւֆթիի տունը և անիկայ քեզ եր-  
բեք չցուցաւնէր անոնց . և երբոր արթնցայ ու ե-  
լայ դուրս այս երիտասարդը պատահեցաւ . և զիս  
բերեց հոս . « ես ալ գնացի աղջիկը տարայ միւֆ-  
թիին տունը և հօն քանի մը մարդոց տոջե ասաց»  
« վերոյիշեալ խօսքերը և յետոյ միւֆթին աղջկան  
հալրցնելով պատկեց ինձ, անկէ յետոյ որչափ որ  
վինարեցին և ուղեցին . միւֆթին չցուցաւց անոնց»  
Այս մարդը ատիկայ պատմեց իւր վրայ . բայց չէ  
թէ ինչպէս որ գրուեցաւ այնպէս այլ շատ երկայն-  
օրէն . բայց ասոր պատմութիւնը ինձ մեծ տպա-  
ւորութիւն ըրտաւ, այս մասին թէ, ուրեմն որչափ  
որ այսպիսի գէպեր պատմուած են մեր գրեւուն  
մէջ բոլորն ալ արապէս եղեր են, Մուհամմէտը ե-  
րազի մէջ չերեւցեր է : Մէյ մը ալ նորէն ես ինձի  
կըսէի, կարելի է որ շատերուն երեւցեր է և շխակ  
են, շատերն ալ այնպէս չինծու բաներ են, ուրեմն  
ի՞նչպէս կարելի է գիտնալ թէ որն է ճիշդը և որը  
ուռւա, կըսէի հիմա միւֆթին հաւատաց որ ճշմա-

ըիտ է և գրեց, ու ապագային իրբեւ ճշմարիտ հրաշք պիտի նկատուի, և գարձեալ կըսէի արդեօք չըլլայ որ ուրիշ բաներու մէջ ալ այսպէս բաներ եղած ըլլայ. մէկ մը ալ ես ինձի դալով կըսէի այս ի՞նչ է որ ես կը մտածեմ, քիչ մնաց որ կրօնքէն ու հաւառքէն ելնայի. վերջապէս եկանք գիւղը :

ցանուած է շատ պտուղ յաւաջ բերէ եւ երբ ես  
այս ընթացքով յաւաջ կերթայի դիւզացիք շատ

նեղացան եւ սկսեցին օր ըստ օրէ խօսիլ քանդի  
կիւտիփ օրը կը պահէի եւ աղան ճան ալ ես  
էի կանչեր այլ թէ աշակերտներուն կանչել կու  
տայի, եւ թուզթ ալ չէի ընէր հիւանդներու  
համար . եւ որ տեղ որ նստէի հացի, դլուխա  
կը բանալի աղօթք կ'ընէի, եւ տառը համար շատ  
անդամ նախառնցին զիս . եւ ես ալ իրենց կը  
քարողէի եւ անուս լինելուն համար չէին կըրք  
հակածառիլ մանաւանդ որ սէյլիտ շատան  
ու բաւական համնղուեր էր իմ կարգացածէս, եւ  
ստ սէյլիտ շասն զրեթէ բալորովին թողեց  
ժողովուրդէն հոգեւոր տառանուդ տունելը եւ  
սկսեց քարողել թէ ընաւ սէյլիոներ չեն կարող  
ձեր մեղքերը թողիլ ի զուր տեղ մի տաք ձեր  
տպրանիքը եւ երբ այն օրեր երկու սէյլիտ եւ  
կաւ գիւղը . աս սէյլիտ շասնը սկսեց հայ  
հոյել անսնց թէ ի՞նչ իրաւունք ունիք զմար  
գիկ կողոպատել . եւ վրնտեց գիւղից . հայհոել  
ըսեցի վասնղի անսնց մէջ ընդ հանուր մեղք է  
հայհոյութիւնը այդինքն ամեն տաեն հայհոյու  
թիւն կլնեն, եւ այս սէյլիտ շասնը տակտ  
ին ան տատիճանի հասած չէր որ չհայհոյէր եւ  
յետոյ շփոյթ ընկատ սէյլիտներու մէջ, պատ  
ճառը ես էի, և մի օր մի սէյլիտ եւ մարդ ալ  
որ անունը իսմայիլ էֆէնտի կըսեն տօփկայ կտա  
ենցի է եւ Նօդսանիի աղան որ Նօդսանին մեծ

բանաստեղծ կամ ոտանաւոր շինող եղեր է եօլ-  
օղինելու մէջ . այս կուգան սէյլիտ չառանի  
առևնը եւ սկսին խօսիլ այդ բաների վրայով եւ  
նա ալ կըսէ թէ մեր մօլան լաւ կը կարդայ  
թող գոյ նա ձեզ հետ խօսի եւ զիս կանչեցին  
եւ գնացի , բայց ես առ խօսայիլ էֆէնտիի հետ  
առաջ ծանօթացեր էի հօրս միջոցաւ , առ ինձ  
տեսնելով սկսեց թէ գու ի՞նչ կարծես վրկու-  
թիւն ի՞նչով է , եւ ես պատասխանեցի թէ եթէ  
կամենում ես , կարդամ Աւետարանը աեսնենք թէ  
ենչով է , եւ առ սկսեց թէ Աւետարան շիտակ  
չէ . բու քու հայրդ իւր ոտանաւոր գրքին մէջ  
կը խօսի Յովհաննու Աւետարանի վրայ եւ կըսէ  
թէ ճշմարդաէ հիմ գու քու հայրդ կը ստե՞ս .  
ոչ առաց ես Յավհաննուին համար շասացի . (քանզի  
այս մարդ շատ ոտանաւորներ շինած է որ եթէ  
վեցինեն այն կողմի եօլօղիներուն կրօնը տակն  
ու վրայ կըլլոյ քանզի մեծ մասը ոտանաւոր է)  
եւ զարմանալի է որ մէկ աեղ այս մարդ Յով-  
հաննէսի անունը կուտայ եւ կը գովէ անոր Աւե-  
տարանը , եւ յետոյ հարցուց թէ ի՞նչ է կը սով-  
րեցնէ Աւետարանը , սկսեցի խօսիլ նախ վըր-  
կութիւն Յիտուսով է միայն վասն զի նա իւր անձը  
տոււաւ իբրեւ զի՞ն , եւ յետոյ ասաը պատուէր-  
ները , այս մարդը պատասխանեց թէ մեր ճամ-  
բան սա է թէ Հայութ ալ ալ այսինքն ձեռք ձեռքի

ձեռք Աստուծոյ , որ կը նշանակէ մենք սէյլիտանե-  
րուն նայելու ենք վրկութեան համար և սէյլիտ-  
ներ իբենց հարց և նոցա հարք առ Աստուծոյ , բայց  
ես այս միջոցին առաջ բերեցի սաղմոսի ան խօսքը  
թէ եթէ ամբարփշաները ձեռք ձեռքի ալ տան ան-  
պատիժ չեն մնար . այս խօսքը արտքերէն կարդա-  
ցի և յետոյ թարգմանեցի և իբենք լւու կեցան .  
քանզի այնչափ նախապաշտառուած են որ երբ մի  
խօսք արտքերէն լսուի , կործեն թէ Աստուծոյ  
բերնէն է . վերջը այս մարդը սկսեց հոգեփոխու-  
թեան համար խօսիլ և դատաստանը ու մեռեցց  
յալութիւնը արանուալ , բայց այս բաներու համար  
ալ նորէն Տէրը ինձ օգնեց և իբենք յաղթուեցան  
և սէյլիտ չառանը հաստատուեցաւ . սակայն այն  
օրեր մի ուրիշ սէյլիտ եկու և զիս շատ նախա-  
տեց Աւետարանի համար և շատ սպառնալիքներ  
ցուցուց , բայց իմ հոգիս կուրախանար . իսկ գա-  
լով գիւղացւոց գիւղացիք չէին հատատար թէ ես  
քրիստոնէութիւնը ընդունած եմ . և երբ ինձ կը  
հարցնէին թէ զու քրիստոնեայ եղեր ես , և ես  
այս՝ կըսէի բայց իմ խօսքը կատակ սեպելով չէին  
հաւատար , և ես սկսեցի ամեն ատեն խօ իլ իբենց ,  
Աւետարանի վրայ . և գիւղէն քիչ հետի մի քա-  
րայք մը կար ամեն օր երէկուոյ պահին կերթայի  
այնաեղ և կարդայի սուրբ գիւղը և կաղթէի առ  
Աստուծոյ ըսելով . քեզ շատ չորդհակալութիւն ովլ

Երկնադին Հայր, որ թշուառիո ողարմելով քու սուրբ գիրքդ ինձ հասցուցիր, որպէս զի ես ձահաշեմ զքեզ կատարելապէս, և նաեւ ճանաչեմ քու որդիդ Տէր Յիսուս Քրիստոսը որ մի միայն անօր տրիւնով է մեղաց լուացումը, ուստի Հիմա ես քու տոշեւդ եմ և միայնակ և կը խնդրեմ որ իմ մեղքերս քաւես ո՛վ Տէր թէպէտեւ շատ մեղաւոր եմ, մեղքերուս շատութեան պատճառաւ կը տարակուսիմ թէ զիս կընդունիս արդեօք. բայց քու խոռքդ կըսէ թէ ով որ գայ ինձ բնաւ դուքս պիտի չհանեմ. ուստի ով Տէր չնորհէ որ ես աս խօսքին լիովին հաւատամ. քանզի իմ փրկութիւնս հիմա աս խօսքէն կախում ունի, որովհետեւ հաւատացեր եմ փրկութիւն քեզմէ է, սակայն ստատանան միաքս տարակուսանաց մէջ կ'ենթարկէ թէ քեզ չընդունէր Յիսուս, քանզի դու մի անդամ՝ Աստուծոյն Հայոցյեր ես, կըսէ ինձ, և նաեւ խնդրեմ ո՛վ Տէր զիս պահէ չարէն ամեն տեսակ մեղք գործելէն. մանաւանդ երիտասարդական անմաքրութիւններէն. քանզի դու զիտես որ ինձ համար շատ փորձութիւններ կան այս տեղեր և շտաբը կուզեն զիս հրապութել. բայց ով Տէր ինչպէս դու Յովսէփին պահեցիր այնպէս ալ զիս պահէ. և նաեւ ով Հայր գիտես ես շատ քիչ բան զիտեմ քու խօսքէն պահեցիր այնպէս ալ զիս պահէ. և նաեւ ով Տէր թէպէտեւ ճանաչեմ ամիայն ասաց թէ քեզ պէս մարդիկ մի օր հազիւթէ երկու գահեկան շահին, ուստի այսափ ժամանակին կը խնդրեմ քու միածին որդիդ անոնովը որ քու հո-

գիդ այսինքն գիտութեան հոգին ինձ չնորհես որ ես շատ լաւ հասկնամ իմ սիրած քու գիրքդ, և նաեւ խնդրեմ ով Տէր որ գու չնորհես որ շուտով քու թագաւորութիւնդ զայ և Տէր Յիսուսի ձեռա քով կտորակուած արդարութիւնը թող գիտացուի բոլոր մարդոց մէջ, և մանաւանդ մեր ազգին մէջ, ով Տէր ես շատ չնորհակալ եմ ինձ չնորհեցիր ներովանաւթեան հոգին որ զիս նախատողները կը սիրեմ և ոչ թէ կատեմ. խնդրեմ գու ողորմէ անոնց որ իրենց ըրտածը հասկնան, և Տէր Յիսուսի դառնան, քանզի քուկդ է թագաւորութիւնը և զօրութիւնը աւ փառք ամեն: Այս ամենի մէջ գործիքի ըլլոյ ով Տէր, վանզի կարելի է իմ խնդրածս չգիտեմ. սակայն դու լաւ զիտես թէ ինչ բան հարկաւոր է և դու զայն չնորհէ Յիսուսի անունով, ամեն:

Այսպէս աղօթում էի շատ անգամ, վերջապէս աշունը մօտեցաւ և ուստա կարապեա եկաւ. բայց ահա զլիկց այն մարդ իր իրաւունքից որ առաջի տեսրակի մէջ լիշած էի թէ նորա ձեռքով տպանք կ'ծալսեր և ցորեն ցանել կուտար և ինձ ալ գրեր էր թէ այնպէս հոգ տար որ շահուի, բայց հիմա ցանուածներէն բան մը չտուաւ խեղճին միայն ասաց թէ քեզ պէս մարդիկ մի օր հազիւթէ երկու գահեկան շահին, ուստի այսափ ժամանակին գու այսուեղ կերեր ես, և իմեր ես, և նու մանակ գու այսուեղ կերեր ես, և իմեր ես,

րէն ես քեզ խղճալով մի բան կուտամ ալ մի խօսիք , և այս մարդը աեսաւ որ իր իրաւունքից զրկուաւ և այլ եւս ուրիշ բան չեմ ուզեր քեզանից առելով . արաւասուեց և ելաւ որ գնաց իւր սունը արտինքն քաղաք ։ Եւ զեւ այս մարդը չը գնացած ուստան սկսեց ինձ ստիպել թէ պէտք է քեզ պատկենք , բայց ես ըսի թէ այս տարի թող մնայ . ստկայն ինք ստիպեց թէ ի՞նչ բան կարգիլէ դու առողջ ես և ինչ ծախք որ լինի ես կուտամ դու յետոյ վճարէ . և ես մի օր ալ ըսի թէ կարելի է այդ բանով իմ սէր զոր ունիմ Քրիստոսի վերայ պաղի , բայց ինք ծիծագելով տաց այդ հէջ , անոնք աղայական խօսքեր են , և ես քեզ խելաց կը կարծէի . դու մարմնաւոր հանգստութիւնդ նաշէ . ո՞վ դժոխքէն եկեր է եւալն . շատ արհամարհական խօսքեր ասաց որ հարկ չեմ սեպեր գրել , յետոյ սա երբ տեսաւ որ ես Աւետարանի համար իմ պատիւ կորանցուցեր եմ , մի օր այս սէյխտ Հասունի տունը ասաց ինձ , այդ ինչ խելք է որ դու կը բանեցնես , հիմա ամեն մարդ քեզ կատէ քու ի՞նչ պէտք է անոնց Աւետարան կարգալ . ես պատասխանեցի դու չեմ դիմեր առաքեալք որչափ հալածուեցան Յիսուսի համար , միթէ ես անոնցմէ աւելի եմ . այս միջոցին սկսեց յանդգնաբոր և արհամարտնօք ասել տուաքեալք . իմար էին զսւ ալ յիմար կուզես ըլլալ . և ես համկնալով որ հա-

ատք չունի . ասացի ես գոլծ չունիմ քեզ հետ , լոէ , և մի խօսիր և այս ժամանակ ես մի նամակ դրեցի . Սարդիս էֆէնտիին թէ հիմա զիս կուզեն ամուսնացնել . բայց ես կը վախնամ որ չլինի թէ փու չերու մէջ ցանուած սերմի պէս լինիմ յետոյ , գուք ի՞նչ կըսէք . և ինքը պատասխանեց թէ ես ալ այդպէս կը կարծեմ . եթէ կարելի է թող այս տարի մնայ . և տեսնենք յետոյ Ցէրը ինչ պիտի ընէ . ասկէ ետք ես մտածեցի թէ ես որ այստեղ մնամ միշտ խղճահար պիտի լինիմ աւելի լաւ է որ գնամ . և ուստի իմ աստուածաշունչ և ուրիշ հարկաւոր գրքերը հաւաքեցի և այս զրկեալ մարդուն տուի որ առանի Սարդիս էֆէնտիին տայ ծածկաբար . այնպէս որ կարապեաը չիմանայ . և այս օրերու մէջ մի օր ուստայ կարապեաը մեր կէս համոզուած սէյխտ Հասանի հետ գնացին Աշկալայ , պտաելու և թէեւ սէյխտ չէր ուզէր երթալ բայց ուստան շատ սախեց և ես ճանապարհ դնելուց գրեթէ տաս հինդ ըսպաէ ետքը լուր եկաւ որ սէյխտ Հասան ձիէն ինկած է և մահուան դուռն է . յետոյ գնացին սայրով բերեցին և ինչպէս որ կարծէին մէջքը կոտրեր էր , և երբ եկայ քովը աչքը բացաւ , ինձ նայեց և ես ըսի հաւաաք ունեցիր Յիսուսին վերայ . պատասխանեց թէ ահա՛ ես կը մեռնիմ . բայց աւելի շատ ցաւիմ որ իմ փափաքիս չ'հասայ . Ցէրը չ'թողեց և նորա մերձաւորնել

սկսեցին մշշերնին խօսիլ թէ ուստան եղաւ պատճառ . բայց այս անվասա մարդը դարձեալ աշքելը բացաւ և կանչեց մարդերը իր մատ և բոլորին առջեւ ասոց գուշք վկայ եղեք իմ խօսքերուս . կարապեալ երբէք ինձ բան չըբերէ այլ թէ ես ինքս ձին քշեցի և ինկայ . գուշք եթէ զիս կը սիրէք կարապեալին աւելի սէր ցուցուցէք որ նա չարբառ մի այս բանի համար :

Ուստի օրեր գիւղացիք պատրաստուեցան տառանորդները քաղաք տանիլ , և պէտք էր որ ես ալ երթայի . ուստի երեք գիշեր գնացի նշանածիս քավը (որ սովորութիւն կայ տեսնուելու համար երթալ և ոչ թէ ուրիշ բան) և իմ գնալու գիտաւուրութիւնս այս էր , թէ կարելի է հաւատայ Յիսուս մին և մի կերպով զանիկայ ալ փախցնեմ անկէ , այս միջներում քունս վաճառած կաշխատէի համոզել և ինքը որ տնուս և տգէտ էր , կաշխատէի իր հասկցածին չափ պարզ խօսիլ և բոլոր բաները երկու կողմէն ալ իրեն ըսել . և վերջապէս հարցընել թէ ի՞նչ կ'ըսէր , պատասխանեց թէ կու զիս զիս (կեաւո՞ր) ընել , և դարձեալ խօսի թէ սցդպէս չէ և սկսէի հասկցնել . յետոյ կը պատասխանէր թէ ես չեմ կրնայ իմ հօրս ճամբան ձգել . և յետոյ կ'ըսէի թէ , եթէ գուն չես կրնար ձգել . ես կրնամ ձգել Յիսուսի սիրոյն համար ամեն բան և քեզ ալ . և երբոր զայս կը լսէր , կ'պատասխան

նէլ թէ , ոչ դու զիս մի ձգե՛ր , որ դու ինչ կրօնէ քի որ կը ծառայես ես ալ քեզ հետ եմ . և ես կ'իմանայի թէ այդ բանը ինձ համար է և ճիշդ համոզում չէ , դարձեալ տրիչ գոհով կը խօսէի և նորէն նոյն հարցեր եւ նոյն պատասխաններ կը լինէր արդիւնքը , այսպէս երեք գիշեր խօսեցի . յետոյ մոտածեցի սա Քրիստոսի համար չգար այլ ինձ համար եւ ես ասիկայ ինձ համար տանելու լինիմ . վերջապէս պիտի կարօննայ իր հար ու մայրը եւայլն եւ ինձ վիշտ եւ խղճահարութիւն պիտի լինի եւ բաց ի ոտկէ երբ հիմա տանելու լինիմ աւելի պիտ' որոնեն եւ հալածեն զիս եւ քանի որ նա Քրիստոսի համար չգար . ես ինչո՞ւ իմ անձս վըտանգի ենթարկեմ մի մարմնաւոր բանի համար որ վարձք չունի :

Յետոյ եկայ հիւանդ սէյյիսին մնաս բարեաւ ըսի եւ յօրդորեցի որ հաւատք անենայ Քրիստոսի վրայ . եւ սայլերի հետ եկայ քաղաք . ճանապարհով մոտածեցի թէ ինչ որ լինի էլ ետ չգարնամ . Եթէ քրիստոնեայք ինձ ընդունեցին եւ միջոց եղաւ աւելի լու սովորիլ Քրիստոսի վարդապետութիւնները քարոզելը այդ մի պարգեւ է Աթուծմէ . խոկ եթէ չեղաւ միտյն կառնեմ Աստուծոյ գիրքը եւ լեռների վերայ զիւղերի մէջ քարոզեմ եւ կապը ըիմ մինչեւ վերջը , ձմեռը առար երկիլներ կերթամ եւ կը քարոզեմ խոկ ամսուը ցուլդ , եւ կը մոտա-

ծէիթէ կարելի է որ լեռներու վերայ խոս ու միշտ  
ուտելով կրնամ ապրիլ ալ. վասնդի մի անդամ  
գըբեթէ երեք օր այդ պէս ապրած էի առանց հացի  
երբ Մուտուլից հօրս հետ զարձած կուգայինք .  
(Եւ սա այսպէս եղաւ ճանապարհի վերայի գիւղերի  
քուրտերը եալաղի համար ելոծ էին իսկ ոմանք  
էլ արքապահանջների եւ զօրապահանջների երեսէն  
փախած էին եւ մենք երեք օր առանց հացի ընդոյլ  
եւ ուրիշ պանջարեղէնք ուտելով,) երբոր եկայ քառ  
շաք քան օր մնացի , բայց ուտան գիւղն էր եւ  
այն սէլլիս իւր իյնալէն մի քանի օր յետոյ կը  
մեռնի , եւ այս քան օրուան մէջ միսիոնարք ինձ  
փոքքնին թէ որդեօք ուղիղ է . բայց Տէրը ինձ  
այսպիսի սէր եւ եռանդ չնորհէր էր որ երբէք բառ  
նէ չի վախնար , մօլլայի հագուստով կուգայի  
ժողվարան եւ տեսնէի որ եղբայրներ զբան առաջ  
երենց գլուխը կը բանան ես ալ կարծէի թէ այդ  
պէս է Աւետարանի ըստածը եւ կը բանայի յետոյ կը  
մանէի ներս իսկ գրան առաջը հասարակաց մեծ  
ճանապարհ էր եւ երբոր շուկայ կերթայի եղբայր  
ների քով սկսէի խօսիլ Աւետարանի վրայ հարցը  
նելով , որպէս թէ առեւտուրի համար լինէր այն  
պէս բարձր . (քանզի մուհամմէտակաթին թոյլ  
չտար այդ պէս բարձր ձայնով խօսիլ Քրիստոսի  
Աստուածութեան վրայ) եւ ամեն մի կողմէն թուրա  
քերը կը նայէին իմ վրաս եւ ով որ ինձ բան մը

ըսելու լինէր ես կը քարոզէի Քրիստոսը այդ ըսու  
զին . այնպէս եղաւ որ եղբայրներէն ոմանք սկսեցին ըսել թէ լու չէ այդշափ եռանդով կամ հաշմարձակութեամբ խօսիլ ամեն մարդուն հետ . քանի որ շատ երկիւղափի է : Բայց ես կերպով մը խնդի պէս եղած էի երբէք աչքիս բան չը երեւնար , միտյն թէ Քրիստոս եւ իր սէրը , ո՞հ կըսէի ալոդեօք Քրիստոս զիս պիտի ընդունի և քանի որ խօստացած է ընդունել իրեն գիմողը այլ եւս ես որմէ պիտի վախնամ թող իմ կեանքս իրեն համար կարուի եւ իմ կեանքս իրեն համար տուած առենս ի՞նչ ըրած կլինիմ . քանի որ ինքն է իմ կեանքս էլ եւ ամենուն ալ Տէրը , եւ բաց ի ասկէ քանի որ նա իր կեանքը զիս եւ ինձ նման մեղաւորները Աստուծոյ մօսեցնելու համար տուած է , ապա ուրեմն ես ինչու ետ քաշուիմ իմ անձս նորա համար տալէն՝ մինչդեռ տուած առեն ալ կը շահիմ :

Եւ ելրոր միտօնաքներուն զիս ներկայացուց  
Սարգիս էֆէնտին . հարցուփորձ ընելէն ետքը ըսին  
թէ կուզե՞ս քեզ Ոտուաստան իրկենք . ասացի  
գուք գիտէք , ես բոլորովին ձեզ յանձնուած եմ  
ուր կուզէք սրբեցք եւ ես կ'երթամ միտյն թէ  
ուղարկում Յիսուսի վարդապետութիւնները . յետոյ  
ասացին թէ քեզ Պուլլարիայ խրկենք . եւ յետոյ  
թէ այստեղ կեցիր , շատ լու կը կենամ պատաս

խանեցի . եւ Պատ . Դաշճեանը եւ միսիօնարները  
մտածեցին այսաեղ ի՞նչպէս կենայ եւ ինչ անէ  
խորհեցոն եւ ինձ ասացին թէ , ձիապահ անունով  
կեցիր եւ պարապ ժամանակներ ալ կարդա՛ , եւ  
ես ընդունեցի . յետոյ . ասացին թէ հապա երբ  
կառավարութիւնը քեզ վնարելու լինելուն ըլլայ  
քու քրիստոնեայ լինելու իմացողների մատնու-  
թեամբ ան ատեն ի՞նչ կ'ըսես , պատասխանեցի  
թէ իմ անձս արդէն Յիսուսի համար գրած եմ եւ  
իր խօսքին հաւատալով հիմակուանէ չեմ խորհիր  
թէ ի՞նչ պիտի պատասխանեմ . միայն թէ ստ ճըշ-  
մարիս է թէ ես եկայ եւ ձեզ գտայ ու Աւետա-  
րան առի , եւ ոչ թէ դուք զիս , ուստի այն ժամ  
հարկ եղած ատեն ես այսպէս կը պարզեմ իլենց  
թէ ես ի՞մ յօրժար կամքով վնարել , գտեր եւ  
ընդուներ եմ այս ճամբան . այն ատեն ձեզ հա-  
մար բան չկայ . իսկ գալով ինձ իմ անձս պատ-  
ուական չեմ սեպեր , միայն թէ Յիսուսը զիս ըն-  
դունէ եւ իմ մեղքերս ներէ . յետոյ Սարդիս է-  
ֆէնտին մտածեց եւ ըսաւ թէ ձիապահ անունով  
մնալը աւելի վտանգաւոր է , որովհեան անմիջա-  
պէս պիտի ըսնն թէ մի մորդ իմամութիւնը ձգե-  
լով ձիապահ ըլլար եթէ ուրիշ դիտաւորութիւն  
չունենայ . ուստի պիտի իմանան բանին ինչ ըլլա-  
ր . եւ գիտենք որ ըլլատորչականներ ինչ աչքով  
կը նոյին մեր վլայ եւ մուհամմէտականներ ստոյդ

դիտնան թէ ճշմարիս է լուսաւորչականներուն այն  
խօսքը թէ « ասոնք չէ թէ միայն մեր կրօնքը քան-  
դել կուգեն այլ մանաւանդ ձեր կրօնքն ալ » .  
եւ ուստի մուհամմէտականներ կը յարձակին մեր  
հկեղեցւոյ վրայ , եւ շատ վնաս կը հասցնեն . յե-  
տոյ խորհեցին զիս խրկել մի ուրիշ տեղ կարդալու ,  
եւ ըսին թէ այժմ գնա՛ խնուս եւ այսաեղ վեց  
ամիսի չափ մնացիր եւ մի քիչ հայերէն սորվիր  
ետքը մենք տեղեկանանք եւ քեզ յարմար դպրոց  
մը խրկենք եւ ասոր համար նամակներ դրեցին .  
բայց ես կուղէի մկրտուիլ հրապարակաւ ժողովա-  
րանի մէջ . ստկայն ըսին թէ համբերէ՛ , հիմա տ-  
աենը չէ , եւ Սարգիս էֆէնտին ինձ ասոց թէ գլ-  
նա՛ եւ հաւատարիմ կեցիր քու դաւանութեանդ  
վրայ եւ տեսնենք թէ Տէրը ինչ պիտի ընէ , եւ  
եղբայներ ըսին թէ երբոր խնուս երթառ եւ Զէ-  
վիրմէ գիւղը մննես տուած քու հանդերձդ փսխէ .  
եւ երբոր եկայ այնպէս ըրի եւ նամակները որ  
տուի այնտեղի վորժապեախն Պ. Մուրատին նա  
խսկոյն ասաց թէ պէտք է քեզ Յովհաննէս կանչենք  
եւ ես ոյնտեղ Պ. Մովլոյի տունը մնացի վեց ամիս  
եւ ամեն օր դպիոյցը կը կարդայի հայերէն . գանք  
որ իմ խնուս ուղղուելէս յետոյ ուստատ կարապե-  
աը կուգայ եւ եղբայրներուն կը հարցնէ զիս . բայց  
անոնք պատասխան չեն տար իլեն եւ մի քանի ա-  
միսից յետոյ երկու թուրքի հետ կուգայ դպրոց

Եւ կը հարցնէ հետեւեալ խորամանկութեամբ թէ  
ուրէ Շուշքրին . ըսէք որ այս մարդիկի պարտական  
են իրեն եւ կուղեն վճարել, վերջապէս նորէն  
պատասխան մը չ'կնար տանել եւ յետոյ կերթայ  
եղբարց քով եւ ոկոի իրասրտին մէջ եղածը ասել .  
թէ փրութիսթանդներ, գուք Շուշքրին քաշեցիք եւ  
հիմա չք աւզէր յայտնել թէ ուրէ, անիկայ մօլ  
լայ էր եւ հիմա գուք կը կարծէք թէ ազա՞տ պի-  
տի մնաք երբնա գիտցուի, ի հարկէ ես անոր տե-  
ռը կիմանամ ան ատեն գուք ահօէք :

Իսկ երբար Սարդիս էֆէնտին լսեր էր թէ իմ  
անունս փոխեր են շատ նեղացեր էր . որովհետեւ  
նա երբէք չուզէր որ այդպէս լինի . եւ իր նամաւ  
կովը ինձ յայտնեց . սո ալ ըսեմ որ խոսու գալուս  
պէս այն տեղ եղող եղբայրները եւ քալողիչ Պ.  
Պօղոս Գարահատեանը ինձ ըսին թէ այս տեղ թէ  
քեզ եւ թէ եկեղեցին համար վտանք կայ, գու  
գնաս խարբէթ լսւէ եւ կարդալ կը սովորիս ու-  
զածիդ չափ ամեն բան . եւ հիմա այգուեղ գնա-  
ցողներ ալ կան, բայց ես ըսի թէ եթէ միսինարա-  
ներ ուղեն կ'երթամ, վասնզի ես խօսք ուուի թէ  
ձեզ յանձնուէր եմ ի նշպէս որ կուզէք իմ մասին  
լսու եղածը ըրէք, եւ հիմա գուք հարցուցէք թէ  
որ ուղեն լսւ, կերթամ, հարցուցին բայց միսիո-  
նարներ չին ուղած . ուստի մնացի, եւ այս վեց  
ամսուան մէջ շատ բաներ տեսայ հաւատքով

Եղբայրներ, թոյլ եղբայրներ, եւ խիստ զարմա-  
ցայ քանզի կը կարծէի թէ անոնք որ Աւետարանը  
ընդուներ են այսպէս բոլորն ալ մի են . եւ այն  
ատեն յիշեցի, Սարդիս էֆէնտին խօսքը թէ « եր-  
բէք մարդոց վրայ պիտի չնոյինք . վասնզի բոլոր  
մարդիկ առաջ, միայն Սատուած հշմարիս է եւ  
մենք Յիսուսը մեղ օրինակ բոնենք եւ անոր նա-  
յնք որ չիմանք . եթէ ոչ շուտ կը գայթակղնէք ։  
ահա այսպէս ես ալ սուրբ գիրքը ինձ առաջնորդ-  
րունած կը ջանայի որ այնպէս քալեմ ինչպէս որ ան  
կը պահանջէ :

Եւ այս վեց ամսուան մէջ հայերէն կարդալ  
եւ գրել բաւական սորվեցայ եւ թէ եւ խօսիլ ալ  
սորվեցայ, բայց ողիզ չկնարալուս համար թուր-  
քերէն կը խօսէի եւ վեց ամիսէն յետոյ գրեցին  
միսիոնարք որ երթամ Ալաշկերտ խասուուր գիւղը .  
եւ եկայ այնտեղ Պ. Ղազար Մալոյեանց քարոզիչ  
էր սրոյ տունը մնացի մի տարի եւ այստեղ ոկսեցի  
հայերէն խօսիլ եւ արդէն Պ. Ղազար տղաք ալ կը  
կարէ ացներ եւ ես ալ տաճկերէն կը սորվեցնէի  
եւ հայերէն ալ կը սորվէի . երբոր աշունը եկաւ  
գեղամ անուն մի հայ պատանի եկաւ այստեղի  
հայ կտթուլիկներուն վարժապետ եղու . գեղամը  
կարդացեր էր սուրբ կարտապետի վանքը եւ լու-  
հայերէն գիտէր . այս պատանին կը փափաքէր  
թուրքերէն սովորիլ արգէն բաւական ալ կարդա-

ցեր էր, եօթ ամիսէն աւելի ինքը թուրքերէն սորվեցաւ, եւ ես հայերէն, իրմէ եւ գարագաշեան գործնական քերականութիւնը լմնցայ. այս տեղ ծանօթացայ եւ շատ մտերմացայ Աբրահամ աղայ Մուշեղեանցի հետ որ ինքը այն երկրի մէջ խօսք գիւցող մարդ է, եւ նաեւ խաստուր դիւզը բնակող Մինաս աղան արտաքուստ շատ սէր կը ցուցնէր ինձ որոյ տղան ալ մի ժամանակ դառ առաւ թուրքերէն. այս Մինասը աւած Մ. ւետարանական կը լինի եւ կ'սկսի դպրոց բանալ խաստուր դիւզը եւ սորվեցնել տղայոց. թէեւ ինքը Բաղեցի է. սակայն հոս առեւտուր կընէ, եւ երբ տեսնէ որ հալածանք շատ կայ Մւետարանի համար կ'երթայ քաղաք որ միսիոնարները մի հրամանագիր առնեն եւ յետոյ դայ եւ սկսի աղատ քարողել. կառավարութիւնն ալ իրեն օգնական ունենալով հալածանաց եւ քիւրտերու տուած նեղութեանց համար. սակայն երբ կերթայ քաղաք միսիոնարք այս նորեկ բողոքական վաճառականին խստութիւն կը ցուցնեն (չեթէ հրաման հանելը դժուար լինելուն համար) եւ ինքը կը գալթակղի, ասոր վրայ կը ձգէ բողոքականութիւնը եւ հետ զհետէ կը գառնայ մեծ թշնամի :

իմ այսաեղ եղած ժամանակս մի նոր կերպ եւս կը բանեցնէ, ուստայ կարապետը իմ որ

ուեղ լինելու իմանալու համար. մի ուրիշ հայ մը կուղարկէ Սարգիս էֆէնափի քով թէ (կըսէ հայը) « ես առեւտուր լինելով գնացի թերձոր զիւղ եւ մի աղջիկ եկաւ ինձ հարցուց թէ արդեօք չե՞ս գիւղէր թէ իմ նշանածն ուր է. քանզի կուղեմ նորա հետ լինել նա ինչ կրօնք որ ընդունած է ես ալ կընդունիմ ». բայց Սարգիս էֆէնափն ուրոշ բան չըսէր եւ երբոր ինձ հարցուց թղթով ես իմացայ որ կարապետի խորամանկութիւնն է :

Այսաեղ եղած ժամանակաւ մի ներքին փորձութիւն մի հոգեւոր նեղութիւն մը պատահեցաւ ինձ որ աւելուգ չեմ համարէր գրելը :

Գարնան ժամանակներն էր մի օր Մւետարան կարգացած ատեն հասայ այն տեղ ուր գրուած է ո՞վ որ հոգոյն որբոյ գէմ մեղանչէ ոչ աշխարհիս մէջ եւ ոչ հանդերձելոյն մէջ չներուիր » ես մտածեցի թէ սա Աստուծոյն հայ հոյել է եւ յիշեցի թէ մի անդամ այդ կնոջ այսինքն գէհճէթի հետ էսրար ծխած ատեն ես ու իմ բերանով հայհոյութիւն ըրեր եմ՝ Աստուծոյն նորա հետ, ուրեմն այս մեղքը ինծի ներուելու չէ, եւ ուստի սատանան զիս մեծ յուսահատութեան մէջ ձգեց եւ սկսեցի տանչուիլ սըրտիս մէջ եւ ախորժակս դադրեցաւ հայ ուտելին. խոր մտածմանց մէջ էի գիշեր ցորէկ, եւ չորս օրի չափ ոչ սքին չյայանեցի, յետոյ Պ.

Հաղարսոյն հարցուցի թէ ի՞նչ է սուրբ հոգւոյ  
դէմ եղած հայհոյութիւն, բայց նա ալ որչափ  
որ աշխատեցաւ չկըցաւ գոհացնել զիս. քանզի  
խիստ խորունկ էր վերքս եւ յետոյ սկսեցի գրը-  
քեր կարդալ եւ մտնաւանդսուրբ գիրքը եւ  
գնալ առանձին տեղեր մտածել եւ աղօթել.  
երբեմն մոքէս կանցնէր թէ թէ եւս ես կատա-  
րելապէս զվատուած չի գիտէր այն առեն. բայց  
նորէն կըսէի թէ ի՞նչպէս չի գիտէր ես գի-  
տէի թէ Աստուած կայ եւ շարերը պատժող իսկ  
արդարները վարձատրող է. եւ սկսէի նորէն  
տանջուիլ եւ երբեմն ալ մոքէս կանցնէր թէ,  
որովհետեւ ես ան առեն որ այս հայհոյութիւ-  
նը ըրի Աստուած ուղեց ինձ իմացնել թէ այս  
մեղքը տններելի է եւ ուստի Աւետարանի գի-  
տութեան մէջ բերեց զիս որպէս զի աւելի մեղ-  
քը իմանամ եւ թէ այս աւել եւ թէ այնտեղ  
տանջուիմ. տրեմն (կըսէի) Աւետարանը ինձ արք-  
ուեցաւ զիս աւելի դատապարտելու ։ ամար եւ  
ոչ թէ փրկելու համար, ո՞հ կըսէի ուշ ին ա-  
ռաջի միիթարական խոստմունքները ի՞նչ երա-  
նելի էին այն օրեր որ դու ինձ ո՞վ Տէր յա-  
ւիտենական գանձեր կը խօստանայիր. իմ անձիս  
փրկութիւնը, իմ հոգւոյս ազատութիւնը եւ եր-  
ջանկութիւնը, Տէր Յիսուսի մահուամբը, եւ դու  
Աւետարան, ինձ որչափ միիթարութիւն կուտա-

իր խօստանալով թէ իմ հոգւոյս կերակուրը պի-  
տի լինիս հիմա զատապարտութեան վճրասո՞ւ-  
եղար. ո՞հ որչափ կը սիրէի զքեղ. և որչափ կը  
սիրէիր զիս, Յիսուս, բայց քու սիրելու միթէ մին-  
չեւ այստեղ էր. քաւ լիցի քանզի գրուած է թէ  
«զանոնք ու սիրեց մինչեւ վերջն ալ սիրեց» նաեւ  
կըսէի, ներէ ո՞վ Տէր քանզի ցաւէս իմ խօսածս  
չմ գիտէր և միայն առ ալ ըսեմ որ նթէ ինձ  
դատապարտելու և գժոխք ալ խրկելու ըլլուս նո-  
րէն դու արդար ես. բայց խօսքս և սրտիս բաղ-  
ձանիքն ու որոշումը այս է որ պիտի չձգեմ քու  
ծառայութիւնդ, այլ մինչեւ վերջ պիտի ծառայեմ  
քեզ. քու կամքդ թող ըլլոյ. այս միջոցին սասաւ-  
նան մաքիս մուծանէր այս խօսքը թէ «այդպէս  
ասելով մի քիչ յոյս կունենաս թէ գուցէ Տէր  
ողորմի քեզ, բայց անցած է ողորմութեան ժամա-  
նակ ինչ ալ ընես պարապէ կուզես ծառայէ կու-  
զես մի ծառայէր միեւնոյն է. քու պատիժդ պիտի  
կըսէս և արդ ինչո՞ւ այս աշխարհքէս և անոր զուար-  
չոյշան երէն զրկուիս, և գերիի պէս ուստան-  
դական ապրիս. գնա՛ այն գործինոր քեզ կուզեն  
— (քանզի սորանից մի քանի շարալի առաջ այս  
Մինաւը այսինքն վաճառականը մի ջաղացք զնեց  
և ինձ կանչեցին ծախողներու կողմէն մի թուզի  
գրեցի թուզքերէն լեզուով. և յետոյ ծախողները  
զլացին և ուղեցին ետք պարձնել և երբ ինդիրը

Ալաշկերտու կառավարութեան հասաւ . Մինասը  
հանեց թուղթը թէ ես գներ եմ . և թուղթը օրի-  
նաւոր լինելուն համար չկրցան ջաղացքը ետ  
դարձնել . և այն միջոցին չու դատաւորը կը հար-  
ցընէ թէ ո՞վ գրեց այս թուղթը յետոյ կըսեն թէ  
խաստուր Յովհաննէս կայ նա գրեց . և սա կըսէ  
թէ մեզի մի գրագիր հարկաւոր է և սա լաւ  
դրող է կանչեցէք դպիր անենք նորան և վասն զի  
այստեղ սրանից աւելի լաւ գրող չգտնուիր և երբ  
իսմայիլ անուն հայ առեւտրականը որ խնուսին  
դատը կը պաշտպանէր եկաւ ինձ ասաց եկ թերզը  
քեզ կը կանչեն և դպիր պիտի ընեն . և երբոր  
բանը իմացայ ասացի չեմ գալ և չգնացի . բայց  
չէ թէ ուրիշ բան մտածեցի . այլ թէ Տէրը զիս  
կանչեց Աւետարանի համար և հիմա ես գնամ  
կաշտակերներու հետ ընկերանամ) — և երբ հու-  
գով զգացի թէ այս մտածմունքը սատանայէն է  
ինկայ Տէրոջ առջեւը և ասացի . Տէր քաւ լիցի որ  
ես նորէն դարնամ այն առջի պղծութիւններուն  
թէեւ մեռնիմ ալ :

Եւ քիչ յետոյ Տէրը զիս միմիթարեց իր խօս-  
քով . սորանից մի ժամանակ յետոյ թերդի դատա-  
ւորը և ուրիշ մի քանի պաշտօնեայններ եկան խաս-  
տուր գիւղ այնտեղ մի ուրիշ գործի համար . և  
արդէն հսա լաւ բնակարան չկար զանոնք հիւրըն-  
կալելու . ուստի մեր դպրոցը իջան և Պ. Ղաղարոս

հիւրընկալեց . և իրիկուն հարցուցած էին թէ այս-  
տեղ Յովհաննէս անուն առաջկագէտ տղան ո՞ւր է .  
և երբ կանչեցին գնացի մի քանի հարցում ըրին  
թէ ո՞ւր սովորեր ես թուրքերէն և պատասխանե-  
լուց յետոյ . բերեցի աստուածաշունչը մէջանեղ և  
Քրիստոսի ծննդեան վրայ կարդացի ուղեցի իմա-  
նալ թէ . այս մալան այսինքն (ՔՇՎ) ի՞նչ բանով  
կընայ ցուցնել թէ Քրիստոս Սատուծոյ որդին չէ  
և ինչ որ կարդացի հաւանութիւն տուաւ թէ այդ-  
պէս է . և երբէք չուզեց վէճ ընել . և այնտեղ նըս-  
տող պաշտոնեայք և հայեր և Պ. Ղաղարոսը շատ  
զարմանք ունեցեր էին իմ համարձակութեան և  
սպասում էին թէ վերջը ի՞նչ կը լինի . և մենք  
երկու ժամի չափ խօսեցանք քրիստոնէութեան  
վրայ . իսկ ևս ի՞նչպէս որ զիս պարտաւոր կը  
համարեմ թէ գիւղուներուն և թէ ագէտներուն  
կրցածիս չափ պարտք կատարեցի ցուցնելով  
թէ ի՞նչպէս որ ամեն մարդ նոյնպէս իրենք  
ունին անմահ հոգի և պարտաւոր են քննել .  
թէ ո՞րն է ճշմարիտ :

Մի օվ էլ Ալաշկերտի առաջնորդը զիս կան-  
չեց և մի խնդիր տուաւ երկրացոց համար առ  
կառավարութիւն . և յետոյ առաջարկեց թէ եկ  
այս մեր դպրոցի մէջ առաջկերէն պատմու-  
թեան վարժապետ եղիր ; և ի՞նչ որ կողես քու  
ամսականդ կը վճարենք . և ևս պատասխանեցի

թէ . ես այժմ միսիօնարաց խնամքով կը կտուա-  
վարուիմ նորանց ուղած տեղ էլ կը ոորվեցը-  
նեմ գիտցածս . եթէ միսիօնարներէն զիս խընդ-  
րէք . այն առեն ես կուգամ . եւ ինքը առաց  
այդ չլինիր և ես էլ չդնացի . բայց այս մի-  
ջոցների մէջ շարունակ միսիօնարաց կը դրէի որ  
զիս շուտով խրկէն մի դպրոց որ խօսացեր էին .  
քանի որ սովորելու ժամանակս անցած չէ և յետոյ  
պարտպէի դորձել Տէրոջ այգին մէջ . մի տարի  
տեւեց իմ Ալաշկերտ մնալոյ յետոյ մի նամակ  
ստացայ միսիօնարներէն թէ գնա դարձեալ խնուս  
և այնուեղ մի նոր վարժապետ եկեր է Գա-  
րեգին Զիթճետնց . և անոր քոյլ պատրաստուիլ .  
յետոյ քեզ կը խրկենք վասնզի մինչեւ հիմա  
հարցնում ենք թէ որտեղ քեզ համար յար-  
մար է . և գու խնուսի դպրոցը տաձկերէն սոր-  
վեցուր քանզի եղայլները շատ ուղում են  
քեզ . և ես եկայ խնուս մնացի վեց ամիս եւս և  
հունձքի Ժամանակի էր երբ զիս խրկեցին միս վան-  
տոզիփի հետ Ռւբմիայ . գաղտնապէս վասնզի խմա-  
ցեր էին թէ զիս կուզն բռնել . բայց Պայտպատէն  
անցնելոց հետոյ . այն տեղէն հեռագրով խմա-  
ցուցեր էին կառավարութեան թէ մի մարդ ան-  
ցաւ պարսկաստան . այս բանը Պ. Պաղարոս լսեր էր .  
Ռւբմի քառասուն օր մնացի . եւ միսիօնարք ըսին  
թէ միսար Զէյմպրո գրեր է որ թող շուտ սուվի .

բայց քանի որ գու ասորերէն չես գիտեր գժուար  
նեմ գիտցածս . եթէ միսիօնարներէն զիս խընդ-  
րէք . քեզ . ուստի աւելի լաւ է դաւրէժ գնաս . եւ  
խրկեցին դաւրէժ :

Գանք մկրտութեան համար որ իրողութիւնը  
այսպէս եղաւ . ես երբ կաշին եկայ առաջին անդամ  
մկրտուիլ կար մտքիս մէջ եւ ինչպէս որ Աւետա-  
րան կը սորվեցնէ , ես ալ այնպէս կ'ուզէի որ զիս  
ոչ թէ ծածուկ ալ յայնի մկրտէին . եւ ես այս-  
պէս կը մտածէի թէ հրապարակաւ Յիսուսը դա-  
ւանիմ մարկանց տոջեւ բռն իմ քաղաքիս մէջ .  
եւ յետոյ մուհամմէտականք զիս բռնեն եւ եթէ  
սպաննեն ալ հոգ չէ , միայն մարմինս պիտի սպաննեն  
եւ այս իմ մեռնելս ալ Տէրոջմոյլ պարտպ չէ վասն  
զի մուհամմէտականներ կը քըրքուէին թէ ինչո՞ւ  
իր անձը տուաւ . եւ յետեւապէս զիս ճանցողներ  
աւելի յետաքրքիւ կը լինին եւ այսպէս քրիստո-  
նէութիւնը մուտ կը գտնէ այս երկրին մէջ . իսկ  
եթէ աղատուեցայ նորէն օրհնեալ լինի Տէրոջը  
կամքը պիտի աշխատաիմ իր այգիին մէջ որշափ որ  
կամքը պիտի աշխատաիմ իր այգիին մէջ որշափ որ  
ողջ եմ : Սակայն այս գիտաւորութեանս չ'հասայ  
ողջ եմ : Սակայն այս գիտաւորութիւն ուրիշ եղեր է այս  
միսիօնարաց գիտաւորութիւն ուրիշ եղեր է այս  
մասին . նորանք մկրտութեան վրայ արժէք չեն  
զներ եղեր . (որ մինչ Տէրը ասում է զնացէք եւ  
մկրտեցէք եւայն) ուստի ժամանակը չէ ասելով  
խրկեցին խնուս եւ անտեղ արդէն ձեռնադրուած  
խրկեցին խնուս եւ անտեղ արդէն ձեռնադրուած

կերտ (բոս բազմականաց) այս միջոցներու մէջ չուտ  
տեսլակներ կարգացի մկրտութեան վեւաբերեալ  
բայց չկրցան համոզիւ թէ մկրտութիւնը արտաքին  
արարութիւն եւ նշան մընէ միայն : (Յաւալի է  
ինձ և խիստ խաճախ մարդ եմ որ այս միջոցների  
մէջ սոլովեցի վախճալ Քրիստոսի անվան համար  
հալոծանք կրելն) . եւ Երբոր Ուրմի եկայ այս  
աեղ միախնարաց առաջարկեցի այս մասին պա-  
տասխանեցին թէ Գաւրէժ որ գնամ ես այստեղ  
մկրտվէ՛, և Գաւրէժ հասնելուս միսխնարք տառ-  
ցին թէ մենք առկէ տռաջ շատ մարդիկ մկրտե-  
ցինք . բայց յետոյ ետ քաշուեցան (բոլորն ալ սեն-  
եակներու մէջ գաղտուկ մկրտած են) ուստի մենք  
ալ կանոն դրինք որ ով ըսէ մկրտուիմ . մի տա-  
րիէն յետոյ մկրտենք և հիմա թէւ քեզ համար  
հարկ չ սպասել ստկայն մեր կահնը չենք ուզեր  
ալւել : Այսպէս զեռ ութը ամիս էի մնացած եկայ  
կարին . քանզի Գաւրէժ ինձ համար սորմելու րան  
չկար ըստ բաւականի և բաց ի առկէ միշտ տկար  
և վատառողջ էի , Կարին մսոր Զէյմպրո ուզեց  
զիսնալ թէ ինչու եկայ . ասացի մի ըստ միոնէ և  
երբ իմացաւ թէ ես դարձեալ կողեմ հրապարա-  
կաւ մկրտուիլ , ասաց կարելի չ որ քեզ ժողովա-  
րան մկրտենք , այլ տանը մի երկու եղբաց մէջ . և  
երբ իրիկունը խօսեցանք մկրտութեան ձեւի վրայ  
և խորհրդին եւ աւալն որ ինձ համաձայն

ուրբթ գրքին չէ երեւում մսոր Զէյմպրոի ըստած-  
ները և ես ալ պարզ կերպով յայտնեցի իմ գտ-  
վագարներս իրեն սուրբ գրքի վկայութիւններով  
և ինքը այդ միջոցին այնպէս խօսեցաւ որ իմ  
գութս շարժեցաւ նա պարզապէս մի խօճ չասաց  
(թէ մենք քեզ այսափի խնամք տարինք և գու հիմա  
ինչպէս մեզ հակառակ համոզում ունիս և թէ չ՝ որ  
քրիստոնէութիւն է որ մեզ կը սախպէ այսպէս ը-  
նելու որպէսզի անմահ հոգիք փրկուին ուրեմն  
ի՞նչպէս այս մասին մենք սխալ լինինք) . բառ առ  
բառ արագէս բան չասաց . ստկայն այնպիսի ձեւ  
գործածեց որ ես այսպէս զգացի :

Գանք որ միւս օրը ես տեսնուեցայ մկրտչա-  
կանաց միսխնարի Պատուելի Յովհաննէսի յետ և  
երբ նորա հետ խօսեցանք աեսայ որ մկրտութեան  
վերայ աւելի տրժէք չ'զնէր քան թէ միւսնէրը .  
բայց ես սուրբ գրքին բերեցի թէ մկրտութիւնը  
մեղաց թօղութեան համար է . ստկայն աեսայ որ  
նա ալ գաղտուկ պիտի մկրտել . և սա ալ ըսեմ  
որ Պատ . Յովհաննէսը զիս պիտի խրկէր Պօլիս որ  
այնակեզ կարգալի . եթէ իւմէ մկրտուէի : Եւ ես  
իմ մէջս ասացի թէ թէւ այս մարդու գտշափա-  
րը մի քիչ լու և համաձայն է սուրբ գրոց . բայց  
քանի որ ճիշտ Քրիստոսի աշակերտաց ըստածին  
պէս չեն ըսեր և չեն ընէր . ինչ օգուտ . եթէ ես  
հիմա սորանից մկրտուիմ , մսոր Զէյմպրո անշուշտ

պիտի նեղանայ . (քանզի կատեն մկրտիչեանները  
որ կարին են) և պիտի ըսենթէ մենք այնշափ խը-  
նամք տարինք իրեն . բայց նա տպերախտ եղաւ և  
անկէ մկրտուեցաւ որ Պօլիս կամ Ամերիկայ  
խրկուի :

Այսպէս իմ Քրիստոսի համար եղած պար-  
ժանքս շահի պիտի դարձնեն (որովհետեւ ես ուր  
որ գնացի այս երեք տարրուայ մէջ զիս կեղծաւոր  
ճանցողներ եղան, շտհու համար եկող ճանցողներ  
եւայլն . թէեւ կային հոգով մարդիկ ալ որ կը  
տեսնէին թէ ես կրակից ազատուած այն խանձողն  
եմ զըր Ցէրը ազատեց իր անհուն գթութեամբը ,  
սակայն միւսները երբ ինձ հետ կը խօսէին  
կըսէի ինչ որ եղնէ . և չի աշխատեր ինքզինքն  
լաւ ձեւացնելու համար ուրիշ խօսքերով ձեւակեր-  
պել իմ պատմութիւնս , ինչպէս ուսանք այսպէս  
ընելով լաւ պատիւ ոնին միտիօնաբաց քով :

Բայց ես կըսէի թէ ի՞նչ վարձք կը լինին ինձ  
բարձրեալէն և չէ՞ որ Քրիստոս զիս կանչեց կե-  
նաց նորոգութեան մէջ քալելու . և սա յայտնի է  
որ երբ գէպք մը կամ մարդու մը պատմութիւնը  
ճշտովին պատմուի նորա մէջ շտա ծուռ կողմ դար-  
ձընելու բաներ և բուն ծուռ բաներ ալ կը գըտ-  
նուին վասնզի մարդ ամեն ժամ մի չէ , բայց եթէ  
մին խորհելով արամաբանելով մի բան գրէ կամ  
պատմէ կարող է այդպէս շինել որ ամեն մարդուն

դուք զայ . քանզի սուտը փողով չէ և այս բանը  
ես ալ կրնայի ընել . բայց քառ լիցի որ այսպէս  
բան մը ես համարձակիմ ընել . քանզի էլ ինչու  
մուհամմէտական կրօնքը ձգեցի . բայց քրիստո-  
նեայ կոչուածնելի մէջ այնպէս կենցաղավարու-  
թիւններ տեսայ որ սկսեցի սրախս մէջ ըսել թէ  
սոցա վերայ կը կատարուի Ցէրովը ըսածը . ծով և  
ցամաք կը պատիք մին նորահաւատ ընելու . երբ  
լինի , կաշխատիք ձևզմէ 100 անգամ տեղի կեղ-  
ծաւոր շինել զայն :

Սրբ համար շատ զգուշտնայի որ մինիմ փառքս  
ամսթի չգարձնէ . ուստի երբէք չուղեցի մկրտուիլ  
ոչ մսար Չէրմագրուէն ոչ ալ Պատա . Յովհաննէսէն ,  
քանզի տեսայ որ Աւետարանի համաձայն չեն ու-  
ղեր մկրտել . և միւս օրը ստացի մի տեղէն Շիշ-  
մաննեանի տերարակը և տեսայ որ իմ գտած վկա-  
յութիւնները հաւաքած են . տեղի շատ սիրեցի  
այն . և մսար Չէրմագր ասաց պաշխպուդ շունիս  
որ քեզ լրկենք խարբերգ . գնաւ Ալաշկերտ . այս  
ձմեռը կեցիր մինչեւ գալուն և եկայ մի ամիսից  
յետոյ ինձ մատնած էր Մինասը կաւալարութեան  
և երբ իմացանք թէ պիտի բռնեն , մատը Չէրմագրին  
գրուեցու . եւ նա գրեց որ փախչիմ Ռուսաստան  
կամ Սամաղար մնամ , կամ նորէն Պալակառան  
գամ եւ եկայ Սամալոր , եղբարք չկրցան մի օրից  
տեղի պահել պաշխպուդ շունենալու ո համար .

Երեւան Դանիէլ պէկի հետ աշխատեցանք եւ չը  
յաջողեցաւ առնել. եւ երբ տեսայ որ չեմ կրնար  
գնալ Պարսկաստան եւ արդէն չեի ուզէր ալ. ես  
առաջուց լսու էի Պըն. Ամիրխաննեանցը եւ Պա-  
նիէլ պէկ եւս պատմեց նորա վերայ ինձ, ուզեցի  
նորա հետ տեսնուիլ եւ եմէ կարելի է մլրտուիլ  
իրմէ. վերջապէս եկայ Թիֆլիս եւ շատ դժուար  
ճանչուեցայ Պ. Ամիրխաննեանցէն եւ երբ տեսայ  
եւ լսեցի իրմէ մլրտութեան վերայ եղած առողջ  
խօսքերը եւ յօժար լինելը եւ մարդոցմէ երկիւղ  
չունենալը եւ ճիշտ Քրիստոնի ըսածին պէս մլրտ-  
ելու յօժար լինելը, նաև երբ տեսայ որ իմ  
պարծանքո (բաղձանիք) որ ունիմ Քրիստոնի վրաց  
մէկը չկրնար խափանել քանդի Պըն. Ամիրխան-  
նեանց ինձ աշխարհային օգնութիւն եւ շահ չներ  
եւ թերեւս չկրնար ալ ընել, առջարկեցի մկըրտ-  
ուեցի Յիսուսի պատուիրաններին համաձայն եւ  
Տէրը ինձ շնորհեց հսկայն պարգեւը եւ իւր խօսքը  
համեմալու ընդունակութիւնը եւ կենգանացոյց  
Յիսուսի հետ ապրելու :

### ՎԵՐՋԱՄԱՆ

1882 կամ 1884 թին էր որ Երեւանու ա-  
ւետարանական բարեկամներին մէկիցը մի նամակ  
ստացայ, որ ինձ հազորդում էր, թէ այնակղ եկել  
է մի թուրք որ առաջ Էրզրումի կողմները մօլլայ է  
եղել, բայց աւետարանը կարդալով քրիստո-  
նէտական ճշմարտութիւններին համոզուած բոլո-  
վին քրիստոնեայ է դարձել եւ հիմա շատ փափա-  
քում է մլրտուիլ: Սակայն որովհետեւ ոչ Տաճ-  
կասամնի եւ ոչ Պարսկաստանի քարոզիչները չեն  
համարձակել մի Մահմէդական մօլլայ, որ բաց ի  
դմանէ Սէ Հյուսէլ է այսինքն ըստ մարմայ Մահմէ-  
դի սերունդիցն է, մլրտնլ, ուսաի Յովհաննէս  
Աւետարաննեանը — իր առաջուուց Մահմէդական  
անհոնը Շուքրին ինքն էր այսպէս փոխել — ցան-  
կանում է գալ Թիֆլիս եւ այնուեղ աներկիւղ  
հրապարակու մլրտուիլ: Շիտուին առած՝ ես այդ-  
համակը ծանր ու շագրութեան արժանի չհամարե-  
ցի. այս մասին տիսուր վարձառութիւններ բաւու-  
կան ունեի: Սակայն մի օր Թիֆլիս տան նցա-  
ւած ժամանակա մի երիտասարդ եկաւ մօտու ու  
հարցըեց:

— Գո՞ւք էք Պատուելի Ամիրխաննեանցը:

— Այո, պատասխանեցի, ես եմ:

— Ես այս Յովհաննէս Աւետարաննեանն եմ, որի  
մասին Դանիէլ բէկը եւ միս եղբարք ձեղ գրել են:

— Շատ բարի , տաշցի , բոյց նորանք ինչ գրել են , որ դու տաճիկ ծնուած ես եւ մօլոյ ես եղել : Սա ինչպի՞սի բան է որ դու հայերէն ես խօսում : Եւ այն էլ բառական լաւ :

— Այն ժամանակից ի վեր որ ես Աւետարանը գտայ եւ կարդացի , պատառխանեց նա , իմ յարաբերութիւններս միշտ հայերի հետ եղել . ուստի ես էլ որոշեցի որ քրիստոնէութիւնը լու հասկանեալու համար սովորեմ հայերէնը թէ դրոց լեզուն թէ աշխարհաբարը , որ կարողանամ ինքս ուզգակի աղբիւրները քննել :

Առաջի անգամը չէր որ ես հայերէն խօսող թուրք էի աեմնում , թէ կովկասում եւ թէ ջոճ կառան տեսել էի բուն տաճիկներ , թըքախօս հայեր ու նոյն խոկ մահմէդականացած հայ ընտանիքներ , որոնք շատ թէ քիչ հայերէն կը խօսէին , բոյց մի մասնաւ որ արտասանութեամբ , որ իսկոյն կը մատնէր թէ խօսողը ի մանկութենէ չէ խօսած հայերէնը իբրեւ իրան մայրենի լեզու : Խոկ ոյս Յովհաննէս Աւետարաննեամի աշտառանութիւնը շատ նման էր զուտ հայերէնի : Յո , ծա , ձո ձոյն երը որ նոյն խոկ թըքախօս կենուարացիները չեն կարօղանում մաքուր հնչել եւ զա են ասում , Յովհաննէսը որոշ արտասանում էր այդ ձայները հայի պէս : Մյուտ հանգամանքը ինձ մեծ տաքտկուսնիքի մէջ զցեց . միշտ մասածում էի , արդեօք

այս անձը մի խարդախ մալդ ըլլինի , որ ինքը ի ծնէ հայ է եւ քրիստոնեայ , բոյց հիմայ տևետարանականներին հետ խաղ է ուզում խաղալ :

Այսպիսի կասկածների մէջ էի այդ անձի մասին մի քանի շաբաթ : Սակայն կասկածներու փարաւակը համար հարց ու փոշէ էի անում իրան մահմէտականութեան մասին եւ զարմանում էի միանգամայն , որ իրաւ մի երփառատրդ մօլլայի շափէլ գիտէր Մահմէդի կրօնը , այնակէս որ եխէ այդ մարդը հայ լինէր , ասում էի ինքս ինձ , անկարելի է որ իսլամից այնքայն ճիշտ տեղեկութիւն ունենայ . միմիայն մի մօլլայ կարող էր պատասխանել այն հարցմանց որ ես անում էի իրան : Նաեւ ասում էր երբեմն թէ շատ մօտ տանջութիւններ է ունեցել թէ կըզբումում թէ Թավրիզում աւետարանական միսիօնարաց եւ քարոզչաց հետա . սակայն ես իմ կասկածներս շարունակելով մտածում էի , թէ այդ էլ ասկաւին չէ ապացուցանում թէ բալը իր ասածները ճշմարիտ են եւ թէ ինքը իրաւ մահմէդական էր առաջ եւ իր պատմութիւնը այն է ինչ որ ինքն է ասում :

Հաւատամ թէ չխառապամ ոյս ասրօրինակ մարդուս ասածնելին՝ ինքնիրենո ասելով հետը միասին կարդում եւ բացտարում էի Յահաննու Աւետարանը եւ միանգամայն նաեւ « միզան-ուլ-հադդ » « կշուռ ճշմարտութեան » կոչուած

տառհերէն գերքը , որ քրիստոնէութիւնն ու իսլամը իրար հետ բաղզատելով առաջնը զօրեղ փաստերով իրեւ ճշմարիտ կրօնք հաստատում եւ երկրորդն իրեւ մարդոյ հանոք ապացուցանում եւ ոչնչացնումէ : Այդ միջոցին շատ նըշտներ էին տռաջ գալիս , որ իրաւ այս մարդը մահմէղական մօլլայ է եղած տռաջ եւ առը զերքը կարդալով փրկիչ Յիսուսին հաւատացել է : Բայց այն ց . ծ . ձ . ձայների զուտ հնչելը , հայերէն մաքուր խօսելը , եւ ոչ նուազ նորա գէմքի անմիջրական գիծերը , եւ չմոռնամ տսելու որ տառհերէն խօսելու եւ գրելու ժամանակ օսմանեան եւ արտրպատական բարբառները իրար խօսնելը միշտ կատկածներս էին հաստատում . թէեւ միւս կողմանէ էլ շատ աշխատում էի ամեն մի փաստ ուրախութեամբ ըրտնել ու պինդ պահել , որ կը ցուցինէր այդ անձի ասածների ճշմարտութիւնը :

Մի օր երբ ըստ մեր սովորութեան իրար հետ այս նիւթերի վերայ խօստկցում էինք , ինձ յայսնեց Աւետարանեանը , թէ միսիօնարներից մի քանի գրքեր է ստացել , որ կարդացել է եւ հիմա էլ եւբեմն կարդում է : Ես ինդրեցի որ այն գրքերը բերէ տեսնեմ : Բերաւ տեսայ որ Ամերիկայի միսիօնարաց կ . Պալում տղած հոգեւոր գրքերիցն են : Այս գրքերը քրքրելիս մինի միւ


յում մի հայելէն նամակ գտայ . որ Չովհաննէս սին իրեն ուղղուած էր : Ոճիցն իսկայն յայանի էր որ գրողը հայ չէ թէեւ նամակը հայերէն էր : Ստորագրութիւնը յայանեց « Զէմպէրս » , ամերեկացի միսիօնարը կրգրումում : Այդ նաև մակից հաստատուեցան բալը այն պատմութիւնները , որ Յովհաննէսն արել էր իր մասին եւ իր յարաբերութեանց մասին առ միսիօնակները :

Բալը կառկածներու չքացան . եւ մի օր երբ Յովհաննէսը կրկն մկրտուելու համար խօսք բացաւ , ես յայանեցի իրան որ յառաջիկայ կիրակի օրը իմ տանս , ուր որ մենք աւետարանական հայերու ժողովում էինք աղօթքի եւ քարոզի , նուրան մկրտեմ : « Ոչ , տուց նա , ես գործի համաձայն չեմ . վասնզի մկրտութիւնը այն գործոց զութիւնն է որ մէկը մկրտուելիս ձգում մի բուլրովին տարբեր վիճակ եւ մտնում է մի բուլրովին ուրիշ վիճակի մէջ թէ իներթուստ թէ արտաքուստ : Ուրեմն մկրտութիւնը ունի Քրիստոսը գտաւնելու նշանակութիւնը , վասն որոյ պէտք է հրապարակաւ կատարուի : Լաւ , տսացի ես , եկող կիրակի գնանք տեղոյս աւետարանական գերմանական եկեղեցին եւ ես այնտեղ քարոզից յետոյ կը խնդրեմ որ մնան եւ քո մկրտուելուդ վըկայ լինեն : « Ոչ , այդ չէ իմ գաղափարս , պատասխանեց նա , ես կողէի ոյնողէս մկրտուիլ որ

զորանից տւելի հրապարակու լինէր» : Ռւեմն  
ուղում ես որ քեզ կուր գետին մէջ մկրտեմ։  
հարցը ես « Այս , ասաց » :

Այսպէս էլ որոշեցինք որ եկող կիրակի , որ  
ըստ հին տոմարի վետրուարի 16-ի էր բոլոր ժողով-  
քով գնանք գետի եղերքը վէտոցելի տան դիմացը։  
Գնացինք ։ Ես եւ ինքը միասին մասնք գետը եւ  
այնքան առաջ գնացինք որ կալելի էր նորոն բոլոր  
մարմնովը ջրին մէջ ընկղմել։ Երբոր մեր երկուքս  
այսուղ միանակ էինք , հարցը , Յովհաննէս , դու<sup>1</sup>  
հաւատում ես Յիսուս Քրիստոսին որ նա քո փըր-  
կին է եւ Աստուծոյ Որդի ։ Նա պատասխանեց ,  
« այս , արտանց հաւատում եմ , որ Յիսուսը իմ  
փրկիչ է եւ Աստուծոյ Որդի է » : « Ռւեմն ես էլ  
քեզ մկրտում եմ Հոր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգ-  
ոյ անունովը ։ ասելով , նորան բոլորին ընկղմե-  
ցի գետին մէջ եւ իսկոյն ջրեցի դուրս եկանք ու  
մեծ որախութիւն ունէինք ամենք » :

Թէ Յովհաննէս Աւետարանեանը իր մկրտո-  
ւելուց յետոյ ինչպէս գնաց Շուէղիա , ինչպէս  
աստուծաբանութիւն տևաւ եւ լեզուներ , յե-  
տոյ ինչպէս կալկոս եկաւ ու գնաց Քաշդար քա-  
րոզեց եւ այսուղ նոր կտակարանը Քաշդարցոց  
լեզուով թարգմանեց ու բերաւ Գերմանիա տպեց ,  
այս բոլորը մի ուրիշ սեղութիւնիւմ է :



Յայաստակի Ազգային գրադարան



NL0429922

Այս Պատմութիւնը ունենալ փափամ  
քող դիմէ.

Ա. ԱՄԻՐԻ ԱՆԵԱՆՑԻ

ի Վառնա (Բուլկարիա)